

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հաշվեքննության հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 160-Ա որոշում

**Հաշվեքննության օբյեկտը**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

**Հաշվեքննության տեսակը**

Կատարողականի

**Հաշվեքննության առարկան**

Փրկարար ծառայություններ

**Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը**

2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ

**Հաշվեքննության կատարման ժամկետը**

2020 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ

**Հաշվեքննության մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 և 300 ստանդարտների համաձայն

**Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</b> .....	5
<b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	11
1.1 Ընդհանուր տեղեկատվություն.....	11
1.2 Հաշվեքննության նպատակը.....	12
1.3 Հաշվեքննության խնդիրները.....	12
1.4 Հաշվեքննության շրջանակը.....	12
1.5 Հաշվեքննության չափանիշները .....	13
1.6 Ինչպե՞ս է իրականացվել հաշվեքննությունը.....	13
1.7 Ճանապարհային քարտեզ .....	13
<b>2. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ</b> .....	14
2.1 Փրկարար ծառայության հրշեջ փրկարարական ջոկատների բաշխվածությունը .....	21
2.2 Հրշեջ-փրկարարական ջոկատների ծանրաբեռնվածությունը .....	27
2.3 Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների բաշխվածությունը, ծարաբեռնվածությունը և խնդիրները.....	31
<b>3. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ</b> .....	35
3.1 Փրկարար ծառայության ստորաբաժանումներում հաստիքային համալրվածությունը .....	35
3.2 Հրշեջ փրկարարական ջոկատների և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տեխնիկական և նյութական հագեցվածությունը.....	37
3.3 Փրկարար ծառայողների համազգեստով և հանդերձանքով ապահովումը.....	39
<b>4. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ</b> .....	44
4.1 Կանչերի գրանցման գործընթացը.....	47
4.2 Կանչերի դասակարգումը և փոխանցումը ՀՓՋ-ներին.....	49
4.3 Կանչերի արձագանքումը, սպասարկումը և մոնիթորինգը .....	50
<b>5. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ</b> .....	54
<b>6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	61
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ</b> .....	67

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայություն
Նախարարություն	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՓՋ	Հրշեջ փրկարարական ջոկատ
ՄՓՎ	Մարզային փրկարարական վարչություն
ՔՊ	Քաղաքացիական պաշտպանություն
ՀՀՀՀՀՀՀՀ	Հայաստանի Հանրապետության Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՀԾ	Հայկական ծրագրեր
ԹՆԱՎ	Թիկունքի և նյութական ապահովման վարչություն
ՃԿԱԿ	Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն
ՃԿԿ	Ճգնաժամային կառավարման կենտրոն
ԱԴ	Արտակարգ դեպք
ՄՀ	Մարտական հաշվարկ
ՓՈՒՎ	Փրկարարական ուժերի վարչություն
ՔՊՈՒՀԿ	Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոն

# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Փրկարար ծառայությունը** ՀՀ ԱԻՆ ենթակա մարմին է<sup>1</sup>, որն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ՔՊ գործառույթներ, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանության, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքներ<sup>2</sup>:

ՀՀ-ում վերջին տասնամյակում արձանագրվել է արտակարգ դեպքերի թվի աճ, որի շուրջ 70%-ը, բաժին է ընկել տեխնածին դեպքերին: Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում հրշեջ մեքենաների թիվը 27-ով պակաս է քաղաքաշինության նորմերով սահմանված քանակից, իսկ Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Ձեյթուն վարչական շրջաններում ՀՓՋ-ներ տեղակայված չեն:

Հաշվեքննությամբ արձանագրվել է մի շարք դեպքեր, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ ՓԾ գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես.

- Հրշեջ փրկարարական ջոկատներում հերթապահություն իրականացնող մարտական հաշվարկների գերակշիռ մասը 6-ի փոխարեն բաղկացած է 4 երբեմն նաև 3 հրշեջ փրկարարից, իսկ ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների բավարար համալրվածություն ապահովելու համար անհրաժեշտ է 501 փրկարար ծառայողի հաստիք: Ի հակադրումն սրա, ՓԾ կենտրոնական ապարատը կազմում է ծառայության ավելի քան 20%-ը, իսկ ապարատի մի շարք վարչություններ ունեն 30-ից ավելի հաստիքներ:
- Տարածքային մասնագիտական ստորաբաժանումների համեմատությամբ կենտրոնական ապարատի բարձրագույն սպայական կազմի թիվը առավել մեծ տեսակարար կշիռ է կազմել, որի հետևանքով, ինչպես նաև Ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգի բացակայության հետևանքով, 2020թ.-ին ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների ընդհանուր գումարի 31.6%-ը կամ 592,785.4 հազ. դրամը վճարվել է կենտրոնական ապարատի փրկարար ծառայողներին, ովքեր Ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել, և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:
- ՓԾ կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների 73.2%-ը 10-տարի և ավելի հնության են: Ընդ որում, 2011-2020թթ. արտադրության 114 տրանսպորտային միջոցներից 51-ը Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնին է, և ՓԾ-ին տրամադրվել է ժամանակավոր, անհատույց շահագործման նպատակով: Ավելին, հին և շահագործումից հանված 174 տրանսպորտային միջոցի համար նախատեսվել է վառելիքի և

<sup>1</sup> ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի թիվ 740-Լ «ՀՀ ԱԻՆ կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 35-րդ կետ

<sup>2</sup> «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

պահպանման ծախսեր, սակայն մեքենաները չեն շահագործվել, իսկ պահպանման և վառելիքի ծախսերը ավելի են պլանավորվել:

- Փրկարար ծառայողների հանդերձանքով ապահովման համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման չափը վերջին 5 տարիներին շուրջ 5 անգամ պակաս է պլանավորվածից, ինչի հետևանքով հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածությունը կազմել է ընդամենը 30%:
- Հրշեջ փրկարարական ջոկատների կողմից իրականացված ընդհանուր ելքերի շուրջ 8%-ի դեպքում հրդեհը մարվել է ինքնուրույն կամ տեղի ուժերով՝ նախքան մարտական հաշվարկի ահազանգման վայր հասնելը:
- 2018-2019թթ. կեղծ ահազանգով պայմանավորված ելքերի թիվը կազմել է ընդհանուր ելքերի շուրջ 7%-ը, որի շուրջ կեսը արձանագրվել է հրդեհների ահազանգման համակարգերի միջոցով: ՀՓՋ-ներից 42-ում (68.8%) ծանրաբեռնվածությունը ցածր է, 13-ում (21%) միջին, իսկ 5-ում (8.2%) բարձր:
- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում զանգերի գրանցման ողջ գործընթացը իրականացվել է ձեռքի աշխատանքի միջոցով, չի եղել կանչերի տեղորոշման և տվյալների փոխանցման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն կտար ոչ միայն բարձրացնել կանչերի գրանցման և արձագանքման արդյունավետությունը, այլև նվազեցնել կեղծ կանչերի վրա ծախսվող ռեսուրսները:
- Կանչի աստիճանի որոշման ավտոմատացված համակարգ չի եղել, աստիճանի որոշումը փաստացի իրականացվել է դիսպետչերի կողմից՝ ահազանգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա, իսկ ՃԿԱԿ-ի կողմից կիրառվող թվային քարտեզները և գեոլոկացիոն համակարգերը եղել են ոչ լիարժեք և ունեցել են սահմանափակ հնարավորություններ:
- Կանչի արձագանքման արդյունավետության գնահատման համար սահմանված արդյունքային չափորոշիչները (նորմատիվները) վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք ակնհայտ բարձր են փաստացի ցուցանիշներից:
- Կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման որևէ չափորոշիչ չի սահմանվել, համակարգի գործունեության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել:
- Բավականին ցածր է նաև Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հենակետերի գործունեության արդյունավետությունը (ամսական աշխատավարձի ֆոնդը կազմել է 64,335.9 հազ. դրամ): Թվով 16 հենակետերից 6-ն ընդհանրապես չի ունեցել տրանսպորտային միջոց, իսկ 3-ի առկա տրանսպորտային միջոցն ընդհանուր օգտագործման օժանդակ ավտոմեքենա է եղել և նախատեսված չի եղել հրշեջ-փրկարարական

աշխատանքներ կատարելու համար: 2020թ. բոլոր հենակետերը միասին իրականացրել են թվով 84 ելք:

- ՓԾ հաստիքացուցակում ներառված և վերջինիս բյուջետային միջոցներից վարձատրվող թվով 146 փրկարար ծառայողներ, առանց որևէ իրավական հիմնավորման, ՀՀ տարածքում գործող թվով 11 հատուկ նշանակություն ունեցող օբյեկտներում իրականացրել են փրկարար ծառայողին չվերապահված գործառույթներ, այն դեպքում, երբ այդ գործառույթները վերոնշյալ օբյեկտների ամենօրյա ուղղակի պարտականությունն է եղել:
- ՀՀ-ում տարբեր միջոցառումներին (համերգներ, սպորտային/ մարզական խաղեր, կորպորատիվ ծրագրեր և այլն) մարտական հաշվարկի հերթապահության որևէ չափորոշիչ և վճար չի սահմանվել:

Փրկարար ծառայության ծախսային արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է ելքի ինքնարժեքի (ծախսեր/ելքի քանակ) հաշվարկ: 2020թ. մարտական հաշվարկի ելքի ամենամեծ ինքնարժեքը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 1,521.1 հազ. դրամ, իսկ ամենացածրը՝ Երևան քաղաքում՝ 176.1 հազ. դրամ: 2018-2020թթ. ՓԾ միավոր ելքի միջին ինքնարժեքը կազել է 331,362 դրամ:

Նշված ինքնարժեքի հաշվարկը հնարավորություն է տվել գնահատել հաշվեքննության շրջանակում արձագրված անարդյունավետ ծախսերի ֆինանսական չափը: Ազդանշող սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերի հետևանքով ՓԾ 2018-2020թթ. կատարել է 436,711.8 հազ. դրամի ծախս, իսկ տեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների համար իրականացված ելքերի հետևանքով՝ 1,651,846.6 հազ. դրամի ծախս:

Ծախսային արդյունավետության գնահատման նպատակով հաշվարկվել է նաև ՃԿԱԿ-ի կողմից զանգերի ընդունման և կանչերի արձանագրման ինքնարժեքը: Մասնավորապես՝ մեկ զանգի սպասարկման ինքնարժեքը Երևան քաղաքում կազմել է 376 դրամ, մարզերում՝ 488 դրամ, իսկ մեկ կանչի արձանագրման ինքնարժեքը համապատասխանաբար՝ 25.1 հազ. դրամ և 44.1 հազ. դրամ:

Հիմնվելով հաշվեքննության արդյունքների վրա՝ Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ Փրկարար ծառայության կազմակերպման գործընթացում 2018-2020թթ. արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ: Փրկարար ծառայության պլանավորման, աշխատանքների կազմակերպման և ծառայության կատարման գործընթացները իրականացվել են բազմաթիվ թերություններով: Փրկարար ծառայությունը պատշաճ մակարդակով չի իրականացրել ՓԾ հաստիքային և նյութական ապահովումը, իսկ կանչերի սպասարկման գործընթացում առկա են եղել ոչ արդյունավետ ծախսային բաղադրիչներ և տարրեր:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ ՓԾ կազմակերպման գործընթացի համար հաշվետու ժամանակահատվածում հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման կառավարումն արդյունավետ չի եղել, և օրենսդրորեն սահմանված նպատակային արդյունքների ամբողջական իրականացմանը չի հանգեցրել:

**Հաշվեքննիչ պալատը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը առաջարկում է.**

1. Մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ՓԾ զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն:
2. Քայլեր ձեռնարկել Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններում ՀՓՋ հենակետեր ստեղծելու ուղղությամբ, այդ նպատակով մշակել ՀՓՋ հենակետ-կայանների նոր չափորոշիչներ, որոնք կիրառելի կլինեն ստեղծված պայմաններում:
3. Մշակել մասսայական միջոցառումներին ՓԾ մարտական հաշվարկի հերթապահության չափորոշիչները, այդ միջոցառումներին մասնակցության դիմումների քննության և բավարարման կարգ, ինչպես նաև ապահովել մարտական հաշվարկների կողմից իրականացվող հերթապահությունների հաշվառումը:
4. Մշակել ՓԾ առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգը, բացառել Ծառայության առանձնահատուկ պայմաններին ուղղակիորեն չառնչվող աշխատակիցներին հավելավճարների տրամադրումը:
5. ՓԾ կենտրոնական ապարատի օպտիմալացման, առանձին օբյեկտներում ծառայություն իրականացնող անձնակազմի և Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի թերձանրաբեռնված ստորաբաժանումների ծառայողների վերաբաշխման միջոցով ապահովել ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների անձնակազմի համալրում:
6. ՓԾ հաշվեկշռում գտնվող, սակայն չշահագործվող տրանսպորտային միջոցները հանել ծառայության հաշվեկշռից և բացառել դրանց ներառումը վառելիքի, տրանսպորտային միջոցների նորոգման և պահպանման և տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերի պլանավորման մեջ:
7. Քայլեր ձեռնարկել Փրկարար ծառայողներին անհատական պաշտպանական միջոցների բավարար քանակով ապահովելու համար:
8. Քայլեր ձեռնարկել ՓԾ թվային տեխնոլոգիաներով հագեցվածության և ՃԿԱԿ-ի տեխնիկական վերազինման բարձրացման ուղղությամբ, ներդնել կանչի տեղորոշման, գրանցման և կանչի փոխանցման ավտոմատացված համակարգեր:
9. Մշակել և ներդնել արտակարգ դեպքերի աճի մոնիթորինգի և վաղաժամ ազդանշան գործուն համակարգ:
10. Հրդեհների ազդանշան համակարգերի միջոցով կանչերի արձանագրման ծառայություն մատուցող կազմակերպությունների համար սահմանել նվազագույն չափորոշիչներ և սերտիֆիկացման պահանջներ, քայլեր ձեռնարկել արձանագրված կեղծ կանչերի նվազեցման ուղղությամբ:
11. Մշակել և հաստատել բազմագործոն նորմատիվներ «Ահազանգ-մեկնում-կանչի վայր-գործողությունների ավարտ» ժամանակահատվածների համար:

12. Ձեռնարկել միջոցառումներ «Ահազանգ-մեկնում-կանչի վայր-գործողությունների ավարտ» ժամանակահատվածների նվազեցման և միջազգային չափորոշիչների համապատասխանեցման ուղղությամբ:
13. Մշակել կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման համակարգ և սահմանել հսկողական մեխանիզմներ:
14. ՀՓՋ-ների ծանրաբեռնվածության և կանչերի արձանագրման ժամային ծանրաբեռնվածությունների ուսումնասիրության հիման վրա վերանայել ՀՓՋ-ների և Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի 24 ժամյա հերթապահության ռեժիմը, մշակել և ներդնել հերթապահությունների առավել արդյունավետ համակարգ:

### **Հաշվեքննիչ պալատը ՀՀ կառավարությանը առաջարկում է.**

1. Ձեռնարկել համապատասխան քայլեր Քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի ամբողջական վերամշակման, թարմացման և հաստատման ուղղությամբ:
2. Վերամշակել և հաստատել ՀՀ քաղաքացիական պաշտպանության նոր հայեցակարգը:
3. Մշակել քաղաքացիական պաշտպանության պլանների և ՔՊ ստորաբաժանումների ստեղծման չափորոշիչներ, սահմանել դրանց կազմման և ներկայացման նկատմամբ հսկողական մեխանիզմներ:
4. Ավարտին հասցնել «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրամշակման աշխատանքները և օրենքի նախագիծը ներկայացնել Ազգային ժողով:
5. Ստանդարտացման պետական ամենամյա ծրագրում ներառել արտակարգ դեպքերի ըստ բնույթի և տեսակների դասակարգման վերաբերյալ ազգային ստանդարտների մշակման աշխատանքները:
6. Քայլեր ձեռնարկել Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեխնիկական վերազինման և ՓԾ թվային հագեցվածության բարձրացման ուղղությամբ:
7. Քայլեր ձեռնարկել ՓԾ տրանսպորտային միջոցների պարկը թարմացնելու և տեխնիկական վերազինման ուղղությամբ:
8. ՓԾ ծառայողների հանդերձանքի և անհատական պաշտպանության միջոցների համար նախատեսված ֆինանսավորումը կատարել հաշվի առնելով առկա պահանջները և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչները:

Լևոն Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

30 մարտի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվեքննիչ պալատը կատարողականի հաշվեքննություն է իրականացրել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայությունների նկատմամբ:

1988թ. Սպիտակի երկրաշարժը բացահայտեց ՀՀ-ում քաղաքացիական պաշտպանության համակարգի շատ հիմնահարցեր և դարձավ այդ համակարգի արմատական վերակազմավորման ու ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ստեղծման հիմնական ազդակը:

Արտակարգ իրավիճակների վարչությունը ստեղծվել է 1991թ.: 1961 թվականից գործող Քաղաքացիական պաշտպանության շտաբն իր բոլոր կազմավորումներով 1991թ. վերջին դրվում է Արտակարգ իրավիճակների վարչության ենթակայության տակ: Վարչությունը, ի տարբերություն ՔՊ գործունեության ոլորտի նեղ շրջանակի, թե՛ հայեցակարգային, թե՛ մասնագիտական, թե՛ իրավական տեսակետներից նոր, լայն մոտեցում է ցուցաբերում համակարգի ողջ աշխատանքի կազմակերպման նկատմամբ՝ ելնելով երկրում հավանական խոշոր աղետների ու վթարների առկայությունից, դրանց դասակարգումից և ռիսկի գնահատումից:

ՀՀ կառավարության 1997թ. սեպտեմբերի 4-ի թիվ 359 որոշմամբ ստեղծվել է արագ արձագանքման փրկարարական ջոկատը, որի գլխավոր խնդիրներն էին աղետի գոտում փրկարարական աշխատանքների իրականացումը, ինչպես նաև արտակարգ պատահարների դեպքում բնակչությանը հնարավոր սեղմ ժամկետում համապատասխան մասնագիտական օգնության ցուցաբերումը, աղետների և վթարների դեպքում վերականգնողական աշխատանքների կատարումը:

1994թ-ից Հայաստանը դառնում է ՔՊ միջազգային կազմակերպության լիիրավ անդամ, իսկ 1997թ. ԱԻ վարչությունը հանվում է ՀՀ կառավարության կառուցվածքից և վերանվանվում ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության:

2005թ. դեկտեմբերին ԱԻ վարչությունը վերանվանվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության, իսկ արդեն 2008թ. ՀՀ նախագահի որոշմամբ ստեղծվում է ՀՀ ԱԻՆ-ը: Նորաստեղծ նախարարության կազմում ընդգրկվում են Հայաստանի փրկարար ծառայությունը, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, Հայպետհիդրոմետը, Պետական ռեզերվների գործակալությունը և Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը:

**Փրկարար ծառայությունը** ՀՀ ԱԻՆ ենթակա մարմին է, որը մշակում և իրականացնում է ՔՊ և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև տարերային և տեխնաժին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, ՔՊ և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման

աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, ՀՀ պաշտպանության կազմակերպման մասնակցության ապահովման ոլորտներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

### **1.2 Հաշվեքննության նպատակը**

Հաշվեքննության թեմայի ընտրությունը պայմանավորված է երկրի բնականոն կյանքի կազմակերպման համար Փրկարար ծառայության ունեցած կարևորագույն դերով:

Ցանկացած երկրի բնակչության անվտանգ կենսագործունեության համար կարևոր դերակատարում ունի զարգացած, դինամիկ և արագ արձագանքող փրկարար ծառայության առկայությունը: Վերջինս բնակչության առողջության և անվտանգության կարևոր երաշխավորներից մեկն է, և միևնույն ժամանակ երկրի անվտանգության կարևորագույն բաղադրիչը:

Վերջին տասնամյակում ՀՀ-ում արձանագրված արտակարգ դեպքերի աճը<sup>3</sup>, աշխարհագրական բարդ տեղակայումը և գլոբալ ռիսկերի ի հայտ գալու բարձր հավանականությունն ընդգծում են երկրում բարձրակարգ ՓԾ անհրաժեշտությունն ու վերջինիս աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման կարևորությունը:

### **1.3 Հաշվեքննության խնդիրները**

Հաշվեքննության իրականացման նպատակն է ՀՀ-ում ՓԾ կազմակերպման գործառույթի գնահատումը, այդ գործընթացում առկա խնդիրների վեր հանումը և լուծման ուղիների որոնումը:

Հաշվեքննության նպատակին հասնելու համար Հաշվեքննիչ պալատն առաջադրել և կենտրոնացել է հետևյալ խնդիրների լուծման վրա.

- ինչպե՞ս է իրականացվել փրկարար ծառայության պլանավորման աշխատանքները,
- ինչպե՞ս է կատարվել փրկարար ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացը,
- որքանո՞վ է արդյունավետ փրկարար ծառայությունների կազմակերպումը:

### **1.4 Հաշվեքննության շրջանակը**

Հաշվեքննությունը ներառել է ՓԾ 2018-2020թթ. գործունեությունը, սակայն ելնելով անհրաժեշտությունից, իրականացվել է նաև ավելի վաղ ժամանակահատվածի տվյալների ուսումնասիրություն, ուսումնասիրվել է նաև ոլորտի միջազգային փորձը:

---

<sup>3</sup> 2018թ. նախորդ տարվա համեմատ ՓԾ կանչերի թիվը աճել է 11%-ով, իսկ 2019-թ՝ 28%-ով: 2020թ. կանչերի քանակի անկումը պայմանավորված է եղել COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների կիրառման հետ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են ՓԾ պլանավորման, կանչերի արձանագրման և արձագանքման, ՀՓՁ-ների տեղաբաշխման և ծանրաբեռնվածության, ծառայության ֆինանսավորման, գործընթացների կառավարման, ռեսուրսների օգտագործման և ծառայության այլ խնդիրները:

Հաշվեքննության ընթացքում օգտագործվել են բազմաբնույթ մեթոդներ, մասնավորապես՝ օրենսդրական կարգավորումների և նորմերի ուսումնասիրություն, ֆինանսական փաստաթղթերի վերլուծություն, տվյալների բազայի վերլուծություն, հարցումներ և հարցազրույցներ հաշվեքննության օբյեկտի համապատասխան պատասխանատու աշխատակիցների հետ:

### **1.5 Հաշվեքննության չափանիշները**

Հաշվեքննության չափանիշները սահմանելու համար օգտագործվել են ՓԾ գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերը, ՓԾ կանոնադրությունը և կանոնագիրքը, ՀՀ ԱԻ նախարարի հրամանները, ՃԿԱԿ վիճակագրական տվյալները: Եզրակացության վերջում նշվել է հաշվեքննության շրջանակներում օգտագործված փաստաթղթերի ցանկը:

### **1.6 Ինչպե՞ս է իրականացվել հաշվեքննությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է INTOSAI<sup>4</sup>-ի կողմից ընդունված ISSAI 100 և 300 ստանդարտներին համապատասխան, իսկ եզրակացությունները հիմնվել են 1.4 բաժնում նշված բազմաբնույթ մեթոդներով հավաքված ապացույցների վրա:

### **1.7 Ծանապարհային քարտեզ**

Եզրակացության 2-րդ բաժնում ներկայացվել է ՓԾ գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, իսկ 3-րդ, 4-րդ և 5-րդ բաժիններում քննարկվել են հաշվեքննության երեք հարցերը: Հաշվեքննության շրջանակներում, ստացված արդյունքներից ելնելով, կատարվել են եզրակացություններ և առաջարկություններ:

---

<sup>4</sup> INTOSAI – Առօրյա քարտեզային մարմինների միջազգային կազմակերպություն, որին անդամակցում է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատը:

## 2. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

*Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝*

- ՓԾ նպատակը, խնդիրներն ու գործառույթները
- ՓԾ ֆինանսավորումն ու գործունեության հիմնական արդյունքները
- ՓԾ հրշեջ փրկարարական ջոկատների և ՔՊ ստորաբաժանումների բաշխվածությունը և ծանրաբեռնվածությունը

### **Իրավական հիմքերը**

**Փրկարար ծառայությունը** ՀՀ ԱԻՆ ենթակա մարմին է<sup>5</sup>, որն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ՔՊ գործառույթներ, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանության, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքներ<sup>6</sup>:

### **ՓԾ նպատակներն ու խնդիրներն են՝**

1. փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կատարման համար մշտական պատրաստականության ապահովումը,
2. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի փրկումն ու առողջության պահպանումը,
3. աղետների ռիսկի նվազեցումը,
4. արտակարգ իրավիճակների կանխմանը, հնարավոր հետևանքների նվազեցմանն ու վերացմանը մասնակցությունը,
5. փրկարար ծառայողների բժշկական, սոցիալական և իրավական ապահովումը,
6. ՔՊ և փրկարարական ստորաբաժանումների մասնագիտական մակարդակի պահպանումը և բարձրացումը:

ՓԾ գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով:

Փրկարար ծառայողների աշխատանքի վարձատրությունը իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն և ՀՀ

<sup>5</sup> ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի թիվ 740-Լ «ՀՀ ԱԻՆ կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 35-րդ կետ

<sup>6</sup> «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

<sup>7</sup> «Փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. հունվարի 13-ի թիվ 23-Լ հրամանի 10-րդ կետ

կառավարության 03.07.2020թ. թիվ 737-Ն որոշումների և դրանցից բխող այլ օրենսդրական ու իրավական ակտերի հիման վրա:

Փրկարար ծառայողներին հանդերձանքով ապահովումը իրականացվել է ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 979-Ն և թիվ 668-Լ որոշումների հիման վրա:


**ՓԾ կառուցվածքը**

ՓԾ բաղկացած է հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից<sup>8</sup>: Կենտրոնական ապարատի մեջ մտնում են 10 հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ ծառայությունը իրականացվում է 11 տարածքային (մարզեր և Երևան քաղաք) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

ՓԾ 2020թ. հաստիքացուցակով նախատեսվել է թվով 3544 հաստիք<sup>9</sup>, որից գեներալ լեյտենանտի՝ 1, գեներալ մայորի՝ 12, սպայական կազմի՝ 788, կրտսեր կազմի՝ 2458 և քաղծառայողի ու տեխնիկական աշխատանք կատարողի՝ 245 հաստիք:

ՓԾ վարչակազմակերպական կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.

**Փրկարար ծառայության վարչակազմակերպական կառուցվածքը<sup>10</sup>**



**ՓԾ հիմնական գործառույթներն են.**

ՓԾ կանոնադրության 11-րդ կետի համաձայն ծառայության հիմնական գործառույթներից են՝

<sup>8</sup> «Փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. հունվարի 13-ի թիվ 23-Լ հրամանի 24-26-րդ կետեր  
<sup>9</sup> ՀՀ ԱԻ նախարարի 2016թ. ապրիլի 12 -ի թիվ 353-Ն հրաման  
<sup>10</sup> ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ 17/955-Լ և 2020թ. հունվարի 17-ի թիվ 17/33-Լ հրամաններ

1) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

2) փրկարար ուժերի և հակահրդեհային ստորաբաժանումների ու կազմավորումների գործունեության համակարգումը,

3) ՔՊ և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացման մասնակցությունը,

4) մարդասիրական (հումանիտար) արձագանքման կազմակերպման մասնակցությունը,

5) տարերային և տեխնաժին արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը և վերլուծումը,

6) մասնակցությունն արտակարգ իրավիճակների և ՔՊ բնագավառում ճգնաժամային կառավարման համակարգի ստեղծմանն ու զարգացմանը,

7) պետական հակահրդեհային ծառայության, ինչպես նաև կազմակերպություններին հակահրդեհային պահպանության և հրշեջ-փրկարարական ծառայությունների մատուցումը,

8) աղետների ռիսկերի նվազեցման, արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներին արձագանքման ռազմավարությունների, ծրագրերի, պլանների, մեթոդական փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև մասնակցությունը դրանց կատարման ապահովմանը,

9) պաշտպանական կառույցների հաշվառման, պահպանման, պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրման միջոցառումների կազմակերպումը.

10) օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

## ՓԾ ֆինանսավորումը

Պետական բյուջեից 2018-2020թթ. «Փրկարար ծառայություններ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար՝ 2018թ-ին 7,420,724.42 հազ. դրամ, 2019թ-ին՝ 9,542,156.29 հազ. դրամ և 2020թ-ին՝ 11,159,984.84 հազ. դրամ: Ծախսերի գերակշիռ մասը՝ շուրջ 90%-ը բաժին է ընկել աշխատաքի վարձատրությանը, շուրջ 3%-ը՝ տրանսպորտային նյութերի ձեռքբերմանը:

**Աղյուսակ 1. 2018-2020թթ. ՓԾ ծախսերի կառուցվածքը**

Հոդված	2018թ.			2019թ.			2020թ.		
	Պլան	Փաստ	%	Պլան	Փաստ	%	Պլան	Փաստ	%
<b>ԸՆԴՀԱՄԵՆԸ</b>	<b>7,525,093.40</b>	<b>7,420,724.42</b>	<b>99%</b>	<b>9,655,709.30</b>	<b>9,542,156.29</b>	<b>99%</b>	<b>11,331,803.80</b>	<b>11,159,984.84</b>	<b>98.5</b>
- Աշխատողների աշխատավարձեր և հավելվածներ	6,617,550.70	6,617,550.70	100%	6,689,320.60	6,689,320.60	100%	8,596,060.20	8,558,526.83	99.6
- Պարգևատրումներ դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	-	-	1,970,866.10	1,970,866.10	100%	1,967,555.20	1,871,275.25	95.1
- Քաղաքացիական դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	16,974.60	16,974.60	100%	17,709.30	17,709.30	100%	17,709.30	17,709.30	100.0
- Էներգետիկ ծառայություններ	97,488.80	95,432.47	98%	94,061.70	93,979.41	100%	117,975.60	117,975.40	100.0
- Կոմունալ ծառայություններ	16,840.10	16,432.43	98%	16,696.60	15,976.65	96%	12,678.10	12,150.06	95.8
- Կապի ծառայություններ	25,614.00	23,715.19	93%	23,055.00	21,763.43	94%	26,594.10	26,463.95	99.5
- Ապահովագրական ծախսեր	11,120.00	11,120.00	100%	12,450.00	10,138.00	81%	9,200.00	8,956.00	97.3
- Գույքի և սարքավորումների վարձակալություն	3,120.00	720.00	23%	8,514.60	8,503.40	100%	5,963.20	5,959.20	99.9
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	42,079.10	42,079.10	100%	46,096.00	46,096.00	100%	30,227.90	29,289.87	96.9
- Համակարգչային ծառայություններ	2,500.00	2,244.00	90%	4,500.00	4,476.00	99%	5,200.00	5,199.40	100.0
- Տեղեկատվական ծառայություններ	1,710.40	1,441.99	84%	3,700.00	1,747.32	47%	725.00	661.17	91.2
- Ներկայացուցչական ծախսեր	5,000.00	4,970.99	99%	1,500.00	1,458.71	97%	4,700.00	3,287.15	69.9
- Մասնագիտական ծառայություններ	200.00	0.00	0%	3,600.00	3,500.00	97%	781.00	-	-
- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	16,959.60	7,981.42	47%	5,000.00	4,266.96	85%	848.30	810.00	95.5
- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	53,691.00	50,956.55	95%	27,985.00	24,558.04	88%	49,012.60	42,969.57	87.7
- Գրասենյակային նյութեր և հագուստ	177,921.40	171,607.05	96%	198,583.80	174,508.75	88%	113,082.30	112,703.16	99.7
- Գյուղատնտեսական ապրանքներ	3,874.50	3,874.50	100%	6,800.00	5,854.00	86%	2,610.00	2,610.00	100.0
- Տրանսպորտային նյութեր	245,868.60	243,453.33	99%	293,840.90	280,839.68	96%	203,898.20	203,755.44	99.9
- Առողջապահական և լաբորատոր նյութեր							2,000.00	2,000.00	100.0
- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	667.60	349.34	52%	3,530.50	3,454.28	98%	6,881.00	6,753.15	98.1
- Հատուկ նպատակային այլ նյութեր	23,739.50	22,736.77	96%	104,725.70	84,278.77	80%	62,358.30	62,343.98	100.0
- Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	136,589.50	61,500.00	45%	97,589.50	53,276.90	55%	70,159.50	43,003.03	61.3
- Այլ հարկեր	25,584.00	25,584.00	100%	25,584.00	25,584.00	100%	-	25,582.93	-


Ինչպես երևում է աղյուսակից, ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ կառավարության 26.09.2019թ. թիվ 1278-Ն որոշմամբ 2019թ-ից փրկարար ծառայողների համար սահմանված պարգևատրումներով և հավելումներով:

## ՓԾ գործունեության արդյունքները

ՀՀ-ում 2018-2020թթ. գրանցվել է ընդհանուր թվով 52 336 արտակարգ դեպք և պատահար: 2018թ. գրանցվել է 16 231 արտակարգ դեպք, որից 11 010-ը (67.8%)՝ տեխնածին, 285-ը (1.8%)՝ տարերային և 4 936-ը (30.4%)՝ սոցիալ-կենսաբանական բնույթի:

2020թ. գրանցվել է 15 216 արտակարգ դեպք, որից 10 729-ը (70.5%)՝ տեխնածին, 468-ը (3.1%)՝ տարերային և 4019-ը (26.4%)՝ սոցիալ-կենսաբանական բնույթի:


ՀՀ-ում վերջին տասնամյակում արձանագրված արտակարգ դեպքերի դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ում:



### Գծապատկեր 1. ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերի դինամիկան՝ ըստ բնույթի 2011-2020թթ.

2020թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է արտակարգ դեպքերի 5 673 (27.2%) նվազում, ինչը պայմանավորված է եղել տեխնածին և սոցիալ-կենսաբանական ԱԴ-երի դասերում գրանցված ցուցանիշների նվազումով:


Ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ շուրջ 70%-ը, բաժին է ընկել տեխնածին դեպքերին, իսկ շուրջ 30%-ը՝ սոցիալ-կենսաբանական բնույթի դեպքերին:



Տեխնածին դեպքերը ըստ բնույթի ՓԾ կողմից դասակարգվում են 14 տեսակների՝ Հրդեհներ, Ճանապարհատրանսպորտային պատահարներ, Փլուզումներ, Վթարներ, Պայթյուններ և այլ պատահարներ: ՀՀ-ում 2020թ. գրանցվել է 10 729 տեխնածին ԱԴ (ԱԴ-երի ընդհանուր թվի 70.5%), 2019թ.՝ 15 255 (73%), 2018թ.՝ 11 010 (67.8%), ինչի հետևանքով զոհվել է 2020թ.՝ 376

(զոհերի ընդհանուր թվի 11.4%-ը), 2019թ.՝ 359 (զոհերի ընդհանուր թվի 84.1%-ը), 2018թ.՝ 364 (զոհերի ընդհանուր թվի 90.3%-ը), տուժել է 2020թ.՝ 5916 մարդ (տուժածների ընդհանուր թվի՝ 3.5%-ը), 2019թ.՝ 6909 մարդ (տուժածների ընդհանուր թվի՝ 55.3%-ը), 2018թ.՝ 6014 մարդ (տուժածների ընդհանուր թվի՝ 53.6%-ը):


Տեխնածին ԱԴ-երի գերակշիռ մեծամասնությունը՝ 98.2%-ը (2019թ.՝ 98.6%-ը, 2018թ.՝ 97.2%-ը), բաժին է ընկել հրդեհներին և ճՏՊ-ներին, որոնք 2019թ. համեմատությամբ զգալի նվազել են՝ համապատասխանաբար 3718-ով (36.3%) և 783-ով (16.3%):



**Գծապատկեր 3. ՀՀ-ում գրանցված տեխնածին բնույթի արտակարգ դեպքերի դինամիկան՝ ըստ տեսակների 2011-2020թթ.**

Վերջին տասնամյակում տեխնածին ԱԴ-երի մնացած դասերի մասնաբաժնային բաշխվածությունում գրանցվել է ինչպես աճի, այնպես էլ նվազման միտումներ, որոնք բաշխվածությունում ակնհայտ փոփոխությունների չեն բերել:

2020թ. արդյունքներով տեխնածին արտակարգ դեպքերի շուրջ 60%-ը բաժին է ընկել հրդեհներին, իսկ 38%-ը՝ ճանապարհատրանսպորտային պատահարներին:



Ինչ վերաբերվում է ԱԴ ամսական բաշխվածությանը, ապա վերջին 3 տարիների ընթացքում կանչերի առավել բարձր մակարդակ է արձանագրվել հունիս-օգոստոս ամիսներին, ինչը պայմանավորված է ամառային ամիսներին տեխնածին դեպքերի հանդես գալու առավել բարձր հավանականությամբ: Սակայն ինչպես առանձին մարզերում, այնպես էլ Երևան քաղաքում առանձին ամիսների նկատվել է դեպքերի կտրուկ աճի միտումներ:

Համաձայն ՓԾ կանոնադրության 11-րդ կետի 15-րդ ենթակետի՝ ՓԾ գործառույթներից է հանդիսանում տարերային և տեխնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը և վերլուծումը: ԱԴ-երի տեղեկատվության հաշվառումը իրականացվում է ՃԿԿ Տեղեկատվության ապահովման և վիճակագրության

բաժնի կողմից, իսկ տվյալների հավաքագրումը և պահպանումը իրականացվում է Excel ֆայլերի միջոցով՝ հիմք ընդունելով օրական կանչերի ամփոփագիրը: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ տեղեկատվության հաշվառման, մշակման և պահպանման համար իրավական կարգավորումներ չեն սահմանվել, ինչպես նաև չի մշակվել տեղեկատվության պահպանման ձևաչափի սահմանման որևէ կարգ:

Տեղեկատվության մշակման ընթացքում ԱԴ-երի տեսակավորումը իրականացվել է ՀՀ ԱԻ նախարարի 17.03.2014թ. թիվ 209-Ա հրամանի համապատասխան: Չնայած միջազգային պրակտիկայում ԱԴ-երի դասակարգման ստանդարտների կիրառմանը, ՀՀ-ում նման ստանդարտներ չեն մշակվել: Միևնույն ժամանակ, ԱԻՆ կողմից Ստանդարտացման Ազգային մարմինն չեն ներկայացվել ոլորտին առնչվող ստանդարտների մշակման առաջարկներ, ինչի հետևանքով 2018-2020թթ. ՀՀ ստանդարտացման պետական ամենամյա ծրագրերում այդպիսիք չեն ներառվել, և սա այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 13.06.2013թ. թիվ 622-Ն որոշման համաձայն՝ ԱԻՆ կողմից նման առաջարկություն ներկայացնելու դեպքում դրանք կհամարվեին առաջնահերթ և կներառվեին ստանդարտացման պետական ամենամյա ծրագրերում:

**ԱԻՆ դիրքորոշում:** *Դասակարգիչների և վիճակագրության վարման ձևաչափերը համաձայնեցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի լիազոր պաշտոնատար անձանց հետ, վարվում և ներկայացվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. հոկտեմբերի 3-ի թիվ 11-Ն և 2010թ. մայիսի 12-ի թիվ 12-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 05-Ն որոշման համաձայն:*

*ՃԿԱԿ-ից ԱԻՆ լիազոր ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ պաշտոնատար անձանց շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, իննամսյա և տարեկան հաշվետվությունները տրամադրվում են համապատասխան ձևաչափով և ժամկետներում ըստ «Շտապ» զեկույցների հաշվետվախտակի՝ համաձայն ԱԻՆ ՓԾ տնօրենի 2019թ. մայիսի 30-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության «Շտապ» զեկույցների հաշվետվախտակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ տնօրենի 2017թ. հունվարի 20-ի N 17/59 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 17/621 հրամանի:*

*Յուրաքանչյուր երկիր դիտարկվող ոլորտում ձևավորում է իր դասակարգիչը՝ հիմք ընդունելով իր երկրի աշխարհագրական, դեմոգրաֆիական, սոցիալական արդյունաբերական, առողջապահական և այլ հանգուցային բնագավառների առանձնահատկությունները: Օրինակ՝ ՌԴ-ում ՃՏՊ-ն արտակարգ պարտահար են հաշվառում այն դեպքում, եթե զոհերի քանակը 4 և ավելին է, խորածածկ փարածքի հրդեհները հաշվառում են 10 հա-ից ավելի դեպքում: Զրահեղծումները չեն հաշվառվում արտակարգ դեպքերի թվում, դրանք դասվում են դժբախտ պատահարների շարքին: Այս տրամաբանությամբ շարժվելով մենք կունենայինք խորածածկ փարածքների շատ քիչ հրդեհներ ու ՃՏՊ-ներ, ինչը բնականաբար չի կարող ընդունելի լինել մեր երկրում:*

*Միաժամանակ տեղեկացնում են, որ միջազգային մի շարք կառույցներ (օրինակ՝ ԱՊՀ ԱԻ և ՔՊ հանձնաժողով, ՄԱԿ-ի ենթակայության փարքեր գրասենյակներ (UNDP, OCHA և այլն)) կիրառում են միմյանցից և ՀՀ-ում վարվողից փարքեր ձևաչափեր:*

**Հաշվեքննողի արձագանք:** *Չի ընդունվել, քանի որ միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրության և դրանցում կիրառվող մեթոդաբանության հիման վրա անհրաժեշտ է մշակել ԱԴ տեսակավորման և հաշվառման մեթոդաբանություն, որը հնարավորություն կտար ցուցանիշները համեմատել այլ երկրների ցուցանիշների հետ, կատարել վերլուծություններ և ուսումնասիրություններ: Միաժամանակ, հարկ է նշել, որ ԱԴ վիճակագրության վարման միասնականացման մոտեցումներ արդեն իսկ կիրառվում են փարքեր միությունների և միջազգային կազմակերպությունների կողմից (օրինակ՝ CTIF - The International Association of Fire & Rescue Services հաշվետվությունները)*

Յուրաքանչյուր եռամսյակի, կիսամյակի, ինն ամիսների և տարեկան կտրվածքով իրականացվել է ԱԴ վերլուծություն, սակայն ԱԻՆ պաշտոնական կայքում այդ վերլուծության արդյունքները չեն հրապարակվել: Հաշվեքննությամբ արձանագրվել է նաև, որ ԱԻՆ պաշտոնական կայքի Վիճակագրություն բաժնում<sup>11</sup> հրապարակված վերջին տեղեկատվությունը վերաբերվում է՝ 2019թ. հունվար-հունիսի ԱԴ-երին, որից հետո նոր թարմացումներ կայքում չի իրականացվել:

Թեև ՓԾ կողմից իրականացվել է ԱԴ-երի վերլուծություն և մշտադիտարկում, սակայն դրանց արդյունքները աշխատանքների պլանավորման հիմքում չի ներառվել, առկա չի եղել միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող դեպքերի աճի վաղ ազդանշան համակարգ (Early warning systems), որից կբխի կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, ծառայության թողունակության բարձրացումը և լրացուցիչ ռեսուրսների ներգրավումը:

**ԱԻՆ դիրքորոշում:** Յուրաքանչյուր եռամսյակի, կիսամյակի, ինն ամիսների և տարեկան կտրվածքով արտակարգ դեպքերի, պատահարների վերլուծությունը ՃԿԱԿ-ից ներկայացվում է ըստ վերադասության: Պաշտոնական կայքի մի քանի խորագրեր (Պատահարներ, Եղանակը Հայաստանում, Ճանապարհները Հայաստանում), որոնք ունեն օպերատիվ նշանակություն, թարմացվում են ՃԿԱԿ-ի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի ծառայողների կողմից: Մնացած բոլոր խորագրերի թարմացման աշխատանքները վերոնշյալ ծառայողների կողմից կրում են տեխնիկական բնույթ (ԱԻՆ-ի լիազոր վարչության կողմից տրամադրված տեղեկատվությունն ըստ ոլորտների տեղադրվում է համապատասխան խորագրերում և բաժիններում):

Early warning systems-ը դեպքերի աճի վաղ ազդանշան համակարգի հետ որևէ առնչություն չունի: Ինչ վերաբերում է դեպքերի, պատահարների քանակական կտրուկ աճին, որը կարող է կրել անհանգստացնող բնույթ, ապա տեղեկացնեմ, որ ՃԿԱԿ ՏԱՎ բաժինը «շահագրգիռ պաշտոնավար անձանց յուրաժամկետ իրազեկում է ՀՀ-ում արտակարգ դեպքերի, պատահարների վիճակագրությունում կտրուկ փոփոխությունների մասին»՝ համաձայն ՃԿԱԿ կանոնադրության 41-րդ կետի 7-րդ ենթակետի:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է իրականացված վերլուծությունների և վիճակագրական տվյալների պարբերաբար և կանոնակարգված հրապարակման անհրաժեշտությունը: Իսկ Early warning systems-ը վաղ ազդանշան համակարգի ընդունված միջազգային անվանումն է, որի ուղղությամբ մշակված և կանոնակարգված գործուն համակարգի ներդրումը Հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվել է որպես ՓԾ կազմակերպման զարգացման կարևոր ուղղություն:

ՓԾ կանոնադրության 12-րդ կետի համաձայն՝ ՓԾ կառավարումն իրականացնում է Նախարարը, իսկ 13-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ Նախարարը հաստատում է ՓԾ զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, ՓԾ տնօրենի առաջարկությամբ նախանշում զարգացման ուղղություններն ու առաջնահերթությունները: Հաշվետու ժամանակահատվածում ՓԾ զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր չեն հաստատվել, զարգացման առաջնահերթություններ չեն սահմանվել, ՓԾ փաստացի երբևէ զարգացման ռազմավարություն չի ունեցել:

## 2.1 ՓԾ հրշեջ փրկարարական ջոկատների բաշխվածությունը

ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. հոկտեմբերի 12-ի թիվ 17/1143 հրամանի համաձայն հաստատվել է «Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության

<sup>11</sup> <http://www.mes.am/hy/vichakagrutyun/>

ստորաբաժանումների ուժերն ու միջոցները հրդեհաշիջման և վթարափրկարարական աշխատանքներին ներգրավման» կարգը, որի 3-րդ բաժնում սահմանվել է ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների սպասարկման տարածքների սահմանազատման ուղեցույցը:

ԱԴ-երի արձագանքումը ՀՀ տարածքում իրականացվում է ՓԾ թվով 11 տարածքային (մարզեր և Երևան քաղաք) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Բնակչության կանչերի արագ արձագանքման նպատակով հանրապետության տարածքում գործում են 61 ՀՓՋ-ներ, որից 47-ը մարզերում, 11-ը՝ Երևան քաղաքում, 1-ական ջոկատ Նաիրիտ գործարանում և ՀԱԷԿ-ում, ինչպես նաև Երևան քաղաքում տեղակայված Փրկարար ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնը:



Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՀ մարզերում ՀՓՋ-ների բաշխվածությունը խիստ անհամաչափ է, դրանք տեղակայված են հիմնականում նախկին ՀՍՍՀ շրջկենտրոններում: Թեև վերջին 30 տարիներին բնակչության թիվը էական փոփոխությունների է ենթարկվել, սակայն ՀՓՋ-ների և դրանցում ներառված մարտական հաշվարկների փոփոխություններ չեն իրականացվել: Արդյունքում, բազմաթիվ բնակավայրերի հեռավորությունը տարածքը սպասարկող ՀՓՋ-ից հասնում է մինչև 40-50 կմ, ինչը գործնականում անհնար է դարձնում մարտական հաշվարկի օպերատիվ ժամանումը դեպքի վայր:

**ԱԻՆ դիրքորոշում:** ԱԻ նախարարի 2015 թվականի ապրիլի 10-ի թիվ 286-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի ստեղծման հեռանկարային ծրագիրը: Ծրագրի համաձայն Հանրապետության տարածքում նախատեսվել է հիմնել 33 կամավորական հրշեջ-փրկարարական հենակետեր: Ներկայումս գործում են 3 կամավորական հրշեջ-փրկարարական հենակետեր՝

- 1) Սյունիքի մարզի Գորայքի կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ.
- 2) Վայոց ձորի մարզի Խաչիկի կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ.
- 3) Գեղարքունիքի մարզի Արփանիշի կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ:

Ներկայումս կամավորական շարժման զարգացման նպատակով հրշեջ-փրկարարական հենակետերի հիմնման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում՝

- 1) Սյունիքի մարզի Շիկահողի համայնքում.
- 2) Վայոց ձորի մարզի Մարտիրոսի համայնքում.
- 3) Տավուշի մարզի Այրումի համայնքում.
- 4) Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում.
- 5) Կոտայքի մարզի Գառնի համայնքում.

6) Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ հաշվետրու ժամանակահատվածում մատնանշված խնդիրը դեռևս եղել է չլուծված, իսկ կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերը եղել են ընդամենը 3-ը, որոնք էական ազդեցություն չեն կարող ունենալ հանրապետության տարածքում կանչերի օպերատիվ արձագանքման հնարավորությունների բարելավման համար, այլ ընդամենը լուծել են տեղային փոքր խնդիրներ:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանով սահմանվել է «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում - ՀՀՇՆ 30-01-2014» նորմերը, որի համաձայն սահմանվել է բնակչություն թվի և զբաղեցրած մակերեսի համապատասխան 1000 բնակչի հաշվով հրշեջ մեքենաների թիվը: Ըստ այդմ, քանի որ Երևան քաղաքը 200 հազարից ավելի բնակչությամբ քաղաք է, հրշեջ ավտոմեքենաների և հաշվարկների թիվը պետք է լինի յուրաքանչյուր 20 000 բնակչի հաշվով 1 մարտական հաշվարկ:

**Աղյուսակ 2. Երևան քաղաքում հրշեջ-փրկարարական հաշվարկների նորմատիվային և փաստացի քանակները**

Վարչական շրջանների անվանումը	ՀՓՁ-ի համարը	Բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ (հազ. մարդ)	Հաշվարկի քանակն ըստ նորմատիվի	Հաշվարկների փաստացի քանակը	Շեղումը նորմատիվից (ավել/պակաս)
<b>Երևան</b>	-	1084	55	28	-27
Աջափնյակ	7	109.8	5	2	-3
Ավան	11	52.9	3	2	-1
Արաբկիր	5	114.5	6	3	-3
Դավթաշեն	13	42.5	2	4	2
Էրեբունի	3	129.3	6	2	-4
Կենտրոն	1, 8	125.5	6	6	0
Մալաթիա-Սեբաստիա	-	139.4	7	0	-7
Նոր-Նորք և Նորք մարաշ	9	144.7	7	2	-5
Նուբարաշեն	10	9.9	1	2	1
Շենգավիթ	2, 4, 6	141.2	7	5	-2
Քանաքեռ-Զեյթուն	-	74.3	4	0	-4

Ինչպես երևում է աղյուսակից, Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում հրշեջ մեքենաների թիվը պակաս է քաղաքաշինության նորմերով սահմանված քանակներից: Ավելին, Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում ՀՓՁ-ներ տեղակայված չեն, իսկ կանչերի արձագանքը իրականացվել է հարևան վարչական շրջաններից:

**ԱԻՆ դիրքորոշում:** 2020թ. սեպտեմբերի 1-ի թիվ 01/5351-2020 գրությամբ դիմել ենք Երևանի քաղաքապետին Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններում համապատասխան տարածքներ կամ անշարժ գույք հարկացնելու խնդրանքով, որին ի պատասխան, 15.09.2020թ. Երևանի քաղաքապետարանը 01/20-896917 գրությամբ տեղեկացրել է, որ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի կազմում հրշեջ-փրկարարական ջոկատների ստեղծման նպատակով համապատասխան տարածքներ առկա չեն: Ինչ վերաբերում է ՀՓՁ-ների տեղակայման համար սահմանված չափանիշներին, ապա ԱԻ նախարարի 2018թ. նոյեմբերի 12-ի թիվ 1256 հրամանի

համաձայն հաստատվել է «Փրկարար ծառայության հատուկ հրշեջ և հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրերին և տարածքում տեղակայվող շենքերին ու շինություններին ներկայացվող պահանջները»:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ելնելով ստեղծված իրավիճակից նպատակահարմար է նշված վարչական շրջանների ՀՓՋ-ների ստեղծման նպատակով առաջնորդվել այլ չափանիշներով և մշակել ՀՓՋ կայանների նոր չափորոշիչներ, որոնք կիրառելի կլինեն ստեղծված պայմաններում:

Գյումրի քաղաքը 2020թ. հունվար ամսվա տվյալներով ունեցել է շուրջ 118 հազար բնակչություն, իսկ քաղաքի մակերեսը կազմում է 36,2 կմ քառակուսի, սակայն ամբողջ քաղաքի սպասարկումը իրականացվում է մեկ ՀՓՋ-ի միջոցով, որի կազմում առկա է ընդամենը 3 հրշեջ-փրկարարական ավտոմեքենա, մինչդեռ ըստ նորմատիվի պետք է լիներ ոչ պակաս քան 5 մարտական հաշվարկ:

2020թ. սեպտեմբերի 1-ի թիվ 01/5351-2020 գրությամբ ԱԻՆ-ը դիմել է Երևանի քաղաքապետարանին Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններում համաատասիսան տարածքներ կամ անշարժ գույք հատկացնելու խնդրանքով, որին ի պատասխան, 15.09.2020թ. Երևանի քաղաքապետարանը 01/20-896917 գրությամբ տեղեկացրել է, որ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի կազմում հրշեջ-փրկարարական ջոկատների ստեղծման նպատակով համապատասխան տարածքներ առկա չեն: Ինչ վերաբերվում է ՀՓՋ-ների տեղակայման համար սահմանված չափանիշներին, ապա ԱԻ նախարարի 2018թ. նոյեմբերի 12-ի թիվ 1256 հրամանի համաձայն հաստատվել է «Փրկարար ծառայության հատուկ հրշեջ և հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրերին և տարածքում տեղակայվող շենքերին ու շինություններին ներկայացվող պահանջները», սակայն հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՓՋ-ների զգալի մասը չի համապատասխանել այս պահանջներին, և շատ դեպքերում այլ շինության կառուցվածքում հարմարեցված կայաններ են:

Ելնելով վերոգրյալից, նպատակահարմար է նշված վարչական շրջանների ՀՓՋ-ների ստեղծման նպատակով առաջնորդվել այլ չափանիշներով և մշակել ՀՓՋ կայանների նոր չափորոշիչներ, որոնք կիրառելի կլինեն ստեղծված պայմաններում:

**ԱԻՆ դիրքորոշում:** ԱՄՆ Եվրոպական հրամանատարության մարդասիրական ծրագրի շրջանակներում ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչությունում կիրականացվեն հրշեջ-փրկարարական ջոկատների շենք-շինությունների, հրշեջ դեպոների վերանորոգման և անձնակազմի կարողությունների զարգացման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում Գյումրի 2-ում կառուցվելու է նոր հրշեջ-փրկարարական շենք, իսկ Ախուրյանում՝ հիմնանորոգվելու է: 2021թ. նախատեսվում է Աշոցքի հրշեջ-փրկարարական շենքի կառուցումը:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ռազմական համագործակցության գրասենյակի հետ համատեղ մինչև 2022թ. նախատեսվում է իրականացնել «Սևան» ազգային պարկի տարածքում գործող Սևանի հատուկ ջրափրկարարական ջոկատի կենտրոնական բազայի կառուցման աշխատանքները, որը պետք է հագեցված լինի նաև ժամանակակից տեխնիկայով և որի կառուցումը կնպաստի Սևանի ավազանում զբոսաշրջության զարգացմանը:

**Հաշվեքննողի արձագանք:** Ընդունվել է ի գիտություն և կիրականացվի հետսիսկողություն:

ՀՀ կառավարության 06.10.2011թ. թիվ 1541-Ն որոշման համաձայն սահմանվել է ՀՀ տարածքում հատուկ (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի) նշանակություն ունեցող օբյեկտների ցանկը և այդ ցանկում օբյեկտների ներառման համար սահմանված չափորոշիչները: Ելնելով սահմանված չափորոշիչներից ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի

05.09.2017թ. թիվ 17/1206 հրամանով հաստատվել է ՀՀ գործող «բարձր կանչի» օբյեկտների ցանկը՝ ըստ բարդության աստիճանների: Ցանկը թարմացվում է նվազագույնը տարեկան մեկ անգամ և 2020թ. արդյունքներով ցանկում ներառված է ընդհանուր թվով 5090 օբյեկտ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թեև ՀՀ տարածքում հատուկ (այդ թվում սեյսմիկ պաշտպանության բնագավառի) նշանակություն ունեցող օբյեկտների ցանկի մեծ լինելուն այնուհանդերձ դրանցից 11-ում, ՓԾ կողմից իրականացվում է հերթապահություն և հակահրդեհային իրավիճակի նկատմամբ հսկողություն:

Նշված օբյեկտների ցանկը և դրանցում ներգրավված փրկարար ծառայողների քանակը ներկայացված է ստորև:

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Փրկարար ծառայողների քանակը
1	Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն	5
2	Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ եվ «ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» համերգասրահ	4
3	Մատենադարան: Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ	1
4	Հայաստանի Հանրային Հեռուստարձկերություն	4
5	Հայաստանի Հանրային Ռադիո	1
6	Հայաստանի պատմության թանգարան	1
7	Հայաստանի ազգային պատկերասրահ	4
8	Հայաստանի ազգային արխիվ	1
9	Հայաստանի ազգային արխիվի Հասարական-քաղաքական փաստաթղթերի բաժին	1
10	Հայաստանի ազգային արխիվի Կինոֆոնոտո փաստաթղթերի և ապահավորական պատճենների մասնաշենք	1
11	Հայաստանի ազգային գրադարան	1
	<b>Ընդամենը հատուկ նշանակության օբյեկտներում</b>	24
1	ՀԱԷԿ ՓԲԸ	91
2	Նաիրիտ գործարան	31
	<b>Ընդամենը</b>	146

Ինչպես երևում է աղյուսակից, թվով 24 փրկարար ծառայողներ ընդհանուր թվով 11 օբյեկտներում ներգրավված են կանխարգելիչ և հսկողական աշխատանքներում, որը ոչ միայն չի հանդիսանում ՓԾ գործառույթ, այլև ուղղակիորեն հանդիսանում է նշված իրավաբանական անձանց պարտականությունները: Միևնույն ժամանակ, առկա չի եղել որևէ հիմնավորում, թե ինչու է համանման կարևոր նշանակության բազմաթիվ օբյեկտների ցանկից հենց այս 11-ում են ներգրավվել փրկարար ծառայողները:

**ԱԻՆ դիրքորոշում:** ՓԾ ՓՈՒՎ Կարևորագույն օբյեկտների պահպանության բաժնի կողմից հերթապահություն իրականացնելու համար ՀՀ Կարևորագույն օբյեկտների ցանկը հաստատվել է ԱԻ նախարարի 2015 թվականի փետրվարի 2-ի թիվ 65-Ա հրամանով, իսկ ԿՕՊ բաժնի գործառույթները սահմանված է ԱԻ նախարարի 2014 թվականի հունվարի 13-ի թիվ 7-Ն հրամանի հավելվածի՝ «ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ԿՕՊ բաժնի կողմից պահպանվող օբյեկտներում հրդեհների կանխարգելման կազմակերպման» հրահանգով, որի 2-րդ կետի համաձայն՝ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ԿՕՊ բաժնի կողմից պահպանվող օբյեկտներ են համարվում այն կազմակերպությունները, որոնց հետ ԱԻՆ-ի կողմից կնքվել են հրդեհային պահպանության պայմանագրեր և որը բխում է «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի և հոդված 5-ի 11, 12 և 36 կետերից:

Միևնույն ժամանակ «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ կազմակերպությունները պարտավոր են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների համաձայն, սահմանված

կարգով, ստեղծել հրդեհային պահպանության ղեկավարման մարմիններ և ստորաբաժանումներ, այդ թվում պետական հակահրդեհային ծառայության հետ կնքված պայմանագրերով:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ չի հիմնավորվել, թե ինչ չափորոշիչների հիման վրա են ընտրվել նշված 11 օբյեկտները և ինչու են հենց այս 11-ի հետ կնքվել հրդեհային պահպանության պայմանագրեր:

Բացի 11 օբյեկտներում հերթապահության իրականացնելուց, ՓԾ կազմում գործում են նաև ՀԱԵԿ ՓԲԸ-ում և Նաիրիտ գործարանում տեղկայված ՀՓՋ-ներ, որոնք հրշեջ-փրկարարական աշխատանքներ իրականացնում են բացառապես իրենց օբյեկտների տարածքում: Ավելին, նշված ՀՓՋ-ներում առկա հրշեջ-փրկարարական տեխնիկական հանդիսանում է տվյալ կազմակերպությունների սեփականությունը, իսկ փրկարար ծառայողները հանդիսանում են ՓԾ աշխատակիցներ: Ավելին, նշված ՀՓՋ-ները օբյեկտի տարածքից դուրս կանչերի չեն մասնակցել և աշխատանքներ չեն իրականացրել:

Արդյունքում, ընդհանուր թվով 146 փրկարար ծառայողներ ներգրավված լինելով Հատուկ օբյեկտների հակահրդեհային պահպանության, ՀԱԵԿ ՓԲԸ-ում և Նաիրիտ գործարանում տեղկայված ՀՓՋ-ներում, փաստացի իրականացրել են տվյալ օբյեկտներին վերապահված գործառույթներ, սակայն վերջիններս ներառված են եղել ՓԾ հաստիքացուցակում և վարձատրվել են ՓԾ բյուջետային միջոցների հաշվին:

**ԱԻՆ դիրքորոշում:** ՀԱԵԿ-ում և «Նաիրիտ» ՓԲԸ-ում ՀՓՋ-ների կողմից ծառայությունը իրականացվում է ԱԻՆ և տվյալ օբյեկտների հետ համատեղ կնքված «Ծառայությունների մատուցման պայմանագրի» համաձայն:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ չի հիմնավորվել բյուջետային միջոցների հաշվին ՀԱԵԿ ՓԲԸ-ում և «Նաիրիտ» ՓԲԸ-ում առանձին ՀՓՋ-ների տեղակայման անհրաժեշտությունը:

Կարևորագույն օբյեկտներում հերթապահություն իրականացնելուց բացի, ՀՀ-ում իրականացվող մասսայական տարբեր միջոցառումների, համերգների, սպորտային և մարզական միջոցառումների, կորպորատիվ մասշտաբային ծրագրերի իրականացման ժամանակ, դրանց կազմակերպիչների ցանկությունից կախված ՓԾ համապատասխան ՀՓՋ-ների մարտական հաշվարկները միջոցառման իրականացման վայրում իրականացրել են հերթապահություն:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ նշված երևույթը բացի հրշեջ փրկարարական աշխատանքների կանխարգելման նպատակով միջոցառումների իրականացումից, որևէ այլ իրավական կարգավորում չի ունեցել: Ավելին, հերթապահության իրականացման դիմումը բավարարելու համար որևէ չափորոշիչ չի սահմանվել, իսկ կոմերցիոն նպատակով մասսայական միջոցառումներին մարտական հաշվարկի հերթապահության համար որևէ վճար ևս չի սահմանվել: Միևնույն ժամանակ, ՓԾ կողմից 2018-2020թթ. ընթացքում իրականացված հերթապահությունների հաշվառում ևս չի իրականացվել:

**ԱԻՆ դիրքորոշում:** ՓԾ-ի կողմից համաձայն՝ «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի և հոդված 5-ի 11, 12 և 36 կետերի իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ անկախ իրականացվող աշխատանքների բնույթից անհրաժեշտ է մշակել հստակ չափորոշիչներ, իսկ կոմերցիոն նպատակով իրականացվող միջոցառումների համար՝ նաև համապատասխան իրավական կարգավորումներ:

**Վերջին պատճառակալում ՀՀ-ում արձանագրվել է արտակարգ դեպքերի թվի աճ,**


**որի շուրջ 70%-ը, բաժին է ընկել տեխնածին դեպքերին: Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում հրշեջ մեքենաների թիվը 27-ով պակաս է քաղաքաշինության նորմերով սահմանված քանակից, իսկ Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Չեյթուն վարչական շրջաններում ՀՓՋ-ներ տեղակայված չեն:**

**ՓԾ հաստիքացուցակում ներառված և վերջինիս բյուջետային միջոցներից վարձարվող թվով 146 փրկարար ծառայողներ, առանց որևէ իրավական հիմնավորման, ՀՀ փարածքում գործող թվով 11 հարուկ նշանակություն ունեցող օբյեկտներում իրականացրել են փրկարար ծառայողին չվերապահված գործառույթներ, այն դեպքում, երբ այդ գործառույթները վերոնշյալ օբյեկտների ամենօրյա ուղղակի պարտականությունն է եղել:**

**Հանրապետությունում փարբեր միջոցառումներին (համերգներ, սպորտային մարզական խաղեր, կորպորատիվ ծրագրեր և այլն) անհրաժեշտ մարտական հաշվարկի հերթապահության որևէ չափորոշիչ և վճարի չափ չի սահմանվել:**

## 2.2 Հրշեջ-փրկարարական ջոկարների ծանրաբեռնվածությունը

2018-2020թթ. ընթացքում ստացված ահազանգերի հիման վրա ՓԾ 61 ՀՓՋ-ների կողմից իրականացվել է 38894 ելք, այդ թվում՝ 2018 թ-ին՝ 19090, 2019-ին՝ 24 627 և 2020-ին՝ 21708: Ելքերի գրաֆիկական պատկերը ըստ տարածքային ստորաբաժանումների ներկայացված է գծապատկեր 4-ում:



**Գծապատկեր 4: Տարածքային ստորաբաժանումների ելքերի դինամիկան 2018-2020թթ.**

Ինչպես երևում է գծապատկերից, ԱԴ-ների և դրանից բխող ելքերի քանակին բնորոշ է որոշակի սեզոնայնություն: Մասնավորապես՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին բոլոր ստորաբաժանումներում արձանագրվել է ԱԴ-երի աճ և ծանրաբեռնվածության ավելացում:

ՀՓՋ-ների ծանրաբեռնվածության գնահատման նպատակով իրականացվել է 2017-2020թթ. դրանց կողմից իրականացված ելքերի վերլուծություն, և միջին օրական ծանրաբեռնվածության հաշվարկ: Հաշվարկի հիման վրա տարբերակվել է ծանրաբեռնվածության 3 մակարդակ՝

- թեթև ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը <1),

- միջին ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը >1 բայց <3),
  - բարձր ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը >3):
- Իրականացված գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3: ՀՓՋ-ների միջին օրական ծանրաբեռնվածությունը 2017-2020թթ.**<sup>12</sup>

Մարզի անվանումը	ՀՓՋ-ի տեղակայման վայրը	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Արարատ	Մասիս	0.55	0.75	1.35	1.15
	Արարատ	0.17	0.28	0.35	0.36
	Արտաշատ	0.70	0.85	1.43	1.20
	Վեդի	0.27	0.24	0.45	0.40
Արագածոտն	Ապարան	0.44	0.55	0.53	0.49
	Թալին	0.27	0.38	0.33	0.25
	Արագած	0.19	0.17	0.23	0.25
	Աշտարակ	0.82	1.19	1.77	1.45
Արմավիր	Վաղարշապատ	0.61	1.01	1.58	1.56
	Արմավիր	0.50	0.59	0.95	0.92
	Բաղրամյան	0.10	0.06	0.15	0.15
Գեղարքունիք	Գավառ	0.47	0.31	0.36	0.32
	Սևան	0.42	0.36	0.30	0.36
	Վարդենիսի	0.32	0.26	0.19	0.24
	Մարտունի	0.22	0.26	0.27	0.28
	Ճամբարակ	0.08	0.05	0.09	0.12
	ՀՋՋ	0.12	0.14	0.07	0.24
	Վանաձոր /1/	0.60	0.56	0.99	1.05
Լոռի	Վանաձոր /2/	0.49	0.27	0.70	0.95
	Ստեփանավան	0.25	0.16	0.38	0.30
	Սպիտակ	0.51	0.32	0.55	0.41
	Տաշիր	0.17	0.13	0.30	0.23
	Գուգարք	0.13	0.06	0.13	0.11
	Ալավերդի	0.23	0.14	0.32	0.28
	Հրազդան	0.99	0.98	0.68	0.85
Կոտայք	Չարենցավան	0.45	0.50	0.50	0.61
	Աբովյան	1.37	1.82	1.99	1.53
	Եղվարդ	0.48	0.76	0.99	0.67
	Հրազդան ԶԷԿ ՀՀՋ	0.01	0.01	0.00	0.00
	Գյումրի	1.25	1.32	1.45	1.39
Շիրակ	Ամասիա	0.04	0.04	0.07	0.13
	Մարալիկ, ԱՆԻ	0.19	0.13	0.19	0.17
	Ախուրյան	0.21	0.25	0.35	0.30
	Արթիկ	0.31	0.26	0.36	0.29
	Աշոցք	0.08	0.09	0.17	0.21
	Կապան	0.98	0.94	1.06	1.02
Սյունիք	Գորիս	0.47	0.41	0.61	0.49
	Քաջարան	0.10	0.12	0.16	0.10
	Սիսիան	0.36	0.41	0.55	0.37
	Մեղրի	0.23	0.22	0.35	0.25
	Եղեգնաձոր	0.53	0.54	0.68	0.80
Վայոց ձոր	Ջերմուկ	0.16	0.15	0.18	0.14
	Վայք	0.29	0.25	0.30	0.35

<sup>12</sup> Կանաչ գույն – թեթև ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը <1)  
դեղին գույն – միջին ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը >1 բայց <3)  
կարմիր գույն – բարձր ծանրաբեռնված (օրական միջին ծանրաբեռնվածությունը >3)

Տավուշ	Իջևան	0.58	0.36	0.89	0.64
	Դիլիջան	0.24	0.23	0.47	0.36
	Բերդ, Տավուշ	0.20	0.13	0.48	0.36
	Նոյեմբերյան	0.24	0.24	0.40	0.30
Երևան	1	4.34	4.87	5.76	4.28
	2	1.25	1.28	2.10	1.78
	3	4.51	4.87	4.62	4.96
	4	1.30	1.42	2.53	2.31
	5	2.90	2.33	6.23	4.63
	6	0.21	0.44	0.99	0.84
	7	7.63	7.15	6.31	4.98
	8	2.95	2.44	3.85	3.36
	9	1.68	1.92	2.60	2.51
	10	0.18	0.27	0.67	0.68
	11	4.19	4.76	2.93	2.84
	ՀՀՁ	1.41	1.32	2.14	1.88
	Նաիրիտ	0.01	0.00	0.08	0.02

Ինչպես երևում է աղյուսակից, 61 ՀՓՋ-ներից 42-ում (68.8%) ծանրաբեռնվածությունը ցածր է, ավելին, դրանցից 22-ում (36%) օրական միջին ծանրաբեռնվածության գործակիցը ցածր է 0.3-ից, ինչը նշանակում է, որ ՀՓՋ-ի կողմից ելքերի իրականացումը եղել է միջինը 4 օրը մեկ անգամ:

Միջին ծանրաբեռնվածության ՀՓՋ-ների թիվը 13 է (21%), ինչը նշանակում է որ այս ՀՓՋ-ներում օրական ելքերի թիվը 1-3 է: Դրանք են՝ Երևանի թիվ 2, 4, 9, 11, ՀՀՁ, Սյունիքի մարզի Կապանի ՀՓՋ-ն, Շիրակի մարզի Գյումրու ՀՓՋ-ն, Կոտայքի մարզի Արսլանի ՀՓՋ-ն, Արարատի մարզի Մասիսի և Արտաշատի ՀՓՋ-ները, Արագածոտնի մարզի Աշտարակի, Արմավիրի մարզի Վաղարշապատի և Լոռու մարզի Վանաձոր 1 ՀՓՋ-ն:

Բարձր ծանրաբեռնվածություն ունեցող ՀՓՋ-ների թիվը 5 է (8.2%), և բոլորն էլ տեղակայված են Երևան քաղաքում: Ընդ որում, այս ՀՓՋ-ներում միջին օրական ծանրաբեռնվածությունը մոտ է 5-ի, այսինքն միջին օրական կանչերի թիվը կազմել է 5 ելք: Միաժամանակ, Երևանի թիվ 6, 10 և Նաիրիտի ՀՓՋ-ները 2017-2020թթ. մշտապես եղել են թերծանրաբեռնված:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՓՋ-ների ծանրաբեռնվածության վրա էական ազդեցություն ունի կեղծ կանչերով պայմանավորված ՄՀ ելքերը: Համաձայն ՃԿԱԿ տրամադրած տեղեկատվության՝ 2018թ. կեղծ կանչերի թիվը կազմել է 894, 2019թ.՝ 1175 և 2020թ.՝ 1050 դեպք: Կեղծ ահազանգերի հիման վրա իրականացվել է համապատասխանաբար՝ 978, 1275 և 1572 ելքեր:

2018-2019թթ. կեղծ ահազանգով պայմանավորված ելքերի թիվը կազմել է ՓԾ ՀՓՋ-ների ընդհանուր ելքերի 5.1%-ը, իսկ 2020թ. ցուցանիշը ավելացել է 2.1%-ով և կազմել ընդհանուր ելքերի 7.2%-ը: Միևնույն ժամանակ, արձանագրված կեղծ կանչերի շուրջ կեսը արձանագրվել է հրդեհների ահազանգման համակարգերի միջոցով, որոնց դինամիան և մարզային բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 4-ում:

#### Աղյուսակ 4: Կեղծ կանչերի դինամիկան և մարզային բաշխվածությունը

	2018թ.	2019թ.	2020թ.
--	--------	--------	--------

<b>Ընդհանուր ելք, հատ</b>	19 090	24 627	21 708
<b>Ընդհանուր կեղծ ելք</b>	978	1 275	1 572
Ազդանշան համակարգի կեղծ ելք, հատ	399	403	783
այդ թվում՝			
Երևան	297	292	578
Լոռի	7	12	13
Շիրակ	15	12	15
Սյունիք	8	8	13
Կոտայք	15	24	49
Տավուշ	2	4	16
Արագածոտն	26	7	16
Արարատ	9	20	26
Վայոց ձոր	13	10	32
Արմավիր	3	12	18
Գեղարքունիք	4	2	7

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՓԶ-ների կողմից իրականացված ելքերի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն նաև այն ելքերը, որոնց դեպքում հրդեհը մարվել է ինքնուրույն կամ տեղի ուժերով նախքան մարտական հաշվարկի ահազանգման վայր հասնելը:

Նշված բնույթի ելքերի թիվը և մարզային բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 5 -ում:

**Աղյուսակ 5: Տեղի ուժերով մարված կամ ինքնամարված հրդեհների քանակը**

	2018թ.	2019թ.	2020թ.
Արագածոտն	56	73	66
Արարատ	48	135	127
Արմավիր	46	107	84
Գեղարքունիք	18	23	22
Երևան	779	1069	1048
Լոռի	39	77	56
Կոտայք	142	206	201
Շիրակ	175	47	39
Սյունիք	54	61	37
Վայոց ձոր	25	35	40
Տավուշ	22	65	49

<b>Ընդամենը, հատ</b>	1404	1898	1769
<b>Կշիռը ընդհանուր ելքերի մեջ, %</b>	7.4	7.7	8.1

Արձանագրվել է նաև, որ վերոնշյալ ԱԴ-երի արձագանքման դեպքում ահազանգի ստացման պահից մինչև մարտական հաշվարկի դեպքի վայր հասնելու միջին ժամանակահատվածը 2018թ. կազմել է 23 րոպե 17 վայրկյան, 2019թ.՝ 18 րոպե 30 վայրկյան, և 2020թ.՝ 24 րոպե 48 վայրկյան:

**ՀՓՋ-ների կողմից իրականացված ելքերի շուրջ 8%-ի դեպքում հրդեհը մարվել է ինքնուրույն կամ տեղի ուժերով՝ նախքան մարտական հաշվարկի ահազանգման վայր հասնելը:**

**Հաշվետու ժամանակահատվածում կեղծ ահազանգով պայմանավորված ելքերի թիվը կազմել է ընդհանուրի շուրջ 7%-ը, որի շուրջ կեսը արձանագրվել է հրդեհների ահազանգման համակարգերի միջոցով:**

**ՀՓՋ-ներից 42-ում ծանրաբեռնվածությունը ցածր է, 13-ում՝ միջին, 5-ում՝ բարձր:**

### **2.3 ՔՊ ստորաբաժանումների բաշխվածությունը, ծարաբեռնվածությունը և խնդիրները**

ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 22.05.2020թ. թիվ 17/587-Լ հրամանի ՔՊ վարչությունն իրականացնում է խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանների մշակման ու դրանց կատարման ապահովման, տարահանման պլանների և ծրագրերի մշակման, քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով բնակչության ուսուցման և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստմանն ու փրկարարական ծառայողների մարտական պատրաստության և զորահավաքային նախապատրաստությանը, ինչպես նաև ՀՀ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման գործառույթներ:

Համաձայն նույն հրամանի 19-րդ կետի, ՔՊՎ քաղաքացիական պաշտպանության պլանավորման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է ՀՀ ՔՊ հանրապետական պլանի մշակում և ճշգրտում ու մեթոդական օգնություն ցուցաբերում պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման գործում: Համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ՔՊ հանրապետական պլանը հաստատվում է Անվտանգության խորհրդի կողմից:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՔՊ հանրապետական պլանը վերջին անգամ հաստատվել է 2010 թվականին ՀՀ նախագահի հրամանով: Նույն խնդիրն է առկա նաև ՀՀ Քաղաքացիական պաշտպանության հայեցակարգի դեպքում, որը վերջին անգամ թարմացվել է 2011թ. դեկտեմբերի 27-ին՝ ՀՀ նախագահի ՆԿ-229-Ն կարգադրությամբ:

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի հանրապետության տարածքում գործող բոլոր կազմակերպությունները, անկախ իրենց կազմակերպատիպական ձևից, պարտավոր են ունենալ ՔՊ կազմավորումներ և հաստատել կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թեև բոլոր կազմակերպությունների համար սահմանված է քաղաքացիական պաշտպանության պլանի պարտադիր ունենալը և լիազոր մարմինն ներկայացնելը, սակայն դրա իրականացման նկատմամբ որևէ հսկողական մեխանիզմ չի սահմանվել: Միաժամանակ, օրենքով ՔՊ պլաններ և Ստորաբաժանումներ ունենալու պահանջ սահմանվել է բոլոր կազմակերպությունների /իրավաբանական անձանց/ համար, սակայն չի սահմանվել որևէ չափորոշիչ կամ դասակարգում կախված կազմակերպության տեսակից և աշխատակիցների քանակից: Օրինակ՝ անգամ մեկ աշխատակից ունեցող ԱԶ-ն կամ ՍՊԸ-ն պարտավոր է հաստատել ՔՊ պլան և այն ներկայացնել լիազոր մարմին:

Օրենսդրական կարգավորման մյուս առանցքային խնդիրը վերաբերվում է նորակառույց շենքերի համար որպես շինարարական նորմ քաղաքացիական պաշտպանության օբյեկտների առկայությանը: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ նման նորմ նախկինում սահմանված չի եղել, այլ սահմանվել է միայն 2021թ.-ին, իսկ մինչ այդ կառուցված շենքերի նախագծերը հաստատվել և կառուցապատումն իրականացվել է նշված պահանջների բացակայությամբ:

ՔՊՎ կողմից 2015-2020թթ. տարեկան աշխատանքային ծրագրերում սահմանվել է «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխություն և վերամշակում: Թեև ՔՊՎ կողմից ներկայացվել է օրենքի նախագիծը, սակայն դրա վերջնական քննարկումը անընդհատ հետաձգվել է և դեռևս այն չի ընդունվել:

ԱԻՆ ՓԾ ՔՊՎ քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի (այսուհետ՝ ՔՊՈՒՀԿ) ծառայության կազմակերպման կարգը սահմանվել է ԱԻ նախարարի 2020թ. ապրիլի 14-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնում ծառայության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 476-Լ հրամանի համաձայն: Միևնույն ժամանակ համաձայն ՓԾ տնօրենի 2020թ. մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրամանի ՔՊՈՒՀԿ իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) հրդեհաշիջման միջոցառումների և փրկարարական աշխատանքների իրականացում.
- 2) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում.
- 3) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում և տարածքի հսկողության կազմակերպում.
- 4) ջրաղբյուրների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքների կատարում.

5) ավերված, խարխված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, դուրս բերման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում:

6) պարեկապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում:

ՔՊՈՒՀԿ անձնակազմը բաղկացած է 301 հոգուց, ամսական աշխատավարձի ֆոնդը 2020թ. կազմել է 64,335.9 հազ. դրամ:

**Աղյուսակ 6. ՓԾ հենակետերի բաշխվածությունը, տեխնիկական զինվածությունը և ելքերի դինամիկան**

Մարզ	Հրշեջ-փրկարարական հենակետ	Տրանսպորտային միջոցը	ՏՄ տեսակը	2018թ.	2019թ.	2020թ.
Լոռի	Օձունի	-	-	2	6	2
Սյունիք	Ագարակի	-	-	0	0	0
Վայոց ձոր	Խաչիկի	-	-	0	0	0
	Գորհայքի	-	-	-	-	0
Տավուշ	Ագատամուտի	ԳԱՁ 66 ԱԲ 30	Հիմնական	0	22	7
	Մովսեսի	ՈՒԱՁ 390995-552-2	Օժանդակ	1	30	13
	Ոսկանի	ՈՒԱՁ 396295-550, ՋԻԼ 130 ԱԲ 40	Օժանդակ, հիմնական	2	6	13
	Չինարի	ՈՒԱՁ 396295-550	Օժանդակ	-	48	11
	Պառավաքարի	ՋԻԼ 130 ԱԲ 40	Հիմնական	-	22	7
	Այգեպարի	-	-	-	24	13
	Ներքին Կարմիր աղբյուր	ՋԻԼ 130 ԱԲ 40, ՎԱՁ 21214, ՋԻԼ 131 ԱՌՍ	Հիմնական, Օժանդակ, հիմնական	-	18	7
	Կոթիի	-	-	-	6	1
	Սարի Գյուղ	ՋԻԼ 130 ԱԲ 40	Հիմնական	-	4	2
	Չորաթանի հենակետ	ՋԻԼ 130 ԱԲ 40	Հիմնական	-	22	7
	Բերդավանի հենակետ	Ֆորդ Էկոնոլինե E-350 7.3 D	Հատուկ	-	2	1
	Դովեղի հենակետ	Շերոլետ Նիվա 212300	Օժանդակ	-	-	0
<b>Ընդամենը</b>				<b>5</b>	<b>210</b>	<b>84</b>

Ինչպես երևում է աղյուսակից, 16 հենակետերից 6-ը ընդհանրապես չի ունեցել տրանսպորտային միջոց, իսկ 3-ի դեպքում առկա տրանսպորտային միջոցը ընդհանուր օգտագործման օժանդակ ավտոմեքենա է և նախատեսված չի եղել հրշեջ-փրկարարական աշխատանքներ կատարելու համար: Միևնույն ժամանակ, այն հենակետերը, որոնք ունեցել են հրշեջ-փրկարարական ավտոմեքենա, չեն ունեցել այդ մեքենայի կայանման համար նախատեսված համապատասխան կայանման վայրեր, հետևաբար ձմեռային ամիսներին մարտական հաշվարկում ներգրավված մեքենան կայանում է առանց ջրի լիցքավորման: Որպեսզի մեքենան բերվի մարտական պատրաստության և մեկնի կանչի

վայր նորմատիվով սահմանված է 40 թույլ ջրով լիցքավորման համար, ինչը ըստ էության ավելի երկար է քան մոտակա ՀՓՋ-ից կանչի վայր հասնելու միջին ժամանակահատվածը:

Արդյունքում, 2018-2020թթ. ՔՊՈՒՀԿ հենակետերը միասին իրականացրել են համապատասխանաբար՝ 5, 210 և 84 ելքեր: Ընդ որում, դրանց գերակշիռ մասը իրականացվել է Ներքին Կարմիրաղբյուրի, Չինարիի և Մովսեսի հենակետերի կողմից:

Հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խմբերի վրա դրված են տեղակայման բնակավայրերի զինված պարեկավորում (բացառությամբ՝ Նոյեմբերյանի ՀՕՊ ՀՓՋ Դովեղի և Տավուշի ՀՕՊ ՀՓՋ Չորաթանի ՀՕՊ ՀՓ խմբերի) և ըստ սպասարկման տարածքների, հրշեջ-փրկարարական և կենցաղային կանչերի սպասարկում:

**Քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը վերջին անգամ հաստատվել է 2010թ. ՀՀ նախագահի հրամանով: ՀՀ Քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը վերջին անգամ թարմացվել է 2011թ. դեկտեմբերի 27-ին՝ ՀՀ նախագահի ՆԿ-229-Ն կարգադրությամբ:**

**Թեև բոլոր կազմակերպությունները պետք է ունենան քաղաքացիական պաշտպանության պլան և ներկայացնեն լիազոր մարմին, սակայն դրա իրականացման նկատմամբ որևէ հսկողական մեխանիզմ չի սահմանվել: Միաժամանակ, օրենքով ՔՊ պլաններ և Սպորաբաժանումներ ունենալու պահանջ սահմանվել է բոլոր կազմակերպությունների համար, սակայն որևէ չափորոշիչ կամ դասակարգում կախված կազմակերպության տեսակից և աշխատակիցների քանակից չի սահմանվել:**

**Բավականին ցածր է եղել նաև ՔՊՈՒՀԿ հենակետերի գործունեության արդյունավետությունը: Թվով 16 հենակետերից 6-ն ընդհանրապես չի ունեցել տրանսպորտային միջոց, 3-ում առկա տրանսպորտային միջոցն ընդհանուր օգտագործման օժանդակ ավտոմեքենա է եղել և նախատեսված չի եղել հրշեջ-փրկարարական աշխատանքներ կատարելու համար: Արդյունքում, 2020թ. բոլոր հենակետերը միասին իրականացրել են ընդամենը 84 ելք:**

### 3. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝

- ՓԾ հասարիքային համայրվածությունը
- ՓԾ տեխնիկական հագեցվածությունը
- Փրկարար ծառայողների համազգեստով և հանդերձանքով ապահովումը

#### 3.1 Փրկարար ծառայության ստորաբաժանումներում հասարիքային համայրվածությունը

ՀՓՋ մարտական հաշվարկը իրենից ներկայացնում է հրշեջ-փրկարարական ավտոմեքենան իր անձնակազմով: Մարտական հաշվարկի կազմը սահմանվել է դեռևս 2000 թվականին՝ ՆԳՆ հրշեջ-շարային պատրաստականության հրահանգի թիվ 2 հավելվածով: Համաձայն այդ հրահանգի, մարտական հաշվարկը բաղկացած է 6 հոգուց՝ հրամանատար, վարորդ, ավագ հրշեջ և 3 հրշեջ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՓՋ-ներում հերթապահություն իրականացնող մարտական հաշվարկների գերակշիռ մասը բաղկացած է 4 երբեմն նաև 3 փրկարարից՝ ներառյալ վարորդը: Մի շարք ՀՓՋ-ներում բացակայել է նաև կապի օպերատորի հաստիքը:

Համաձայն ՓՈւՎ կողմից իրականացված հաշվարկների, մարզային 46 և Երևան քաղաքի 13 ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների բավարար համայրվածություն ապահովելու համար անհրաժեշտ է թվով 501 հաստիք, որից 140-ը՝ քաղաքացիական և 361-ը՝ փրկարար ծառայողի:

2020թ. փրկարար ծառայողների 28%-ը աշխատել է կենտրոնական ապարատի մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում:

#### Աղյուսակ 7. Փրկարար ծառայողների բաշխվածությունը ըստ կոչումների

	շարքային	կրտսեր սերժանտ	սերժանտ	ավագ սերժանտ	ավիա	ենթաստան	ռիտմով ավիա	լեյտենանտ	ավագ լեյտենանտ	կապիտան	մայր	փխջնդրախետ	գնդապետ	Քաղծառայող և տեխնիկական աշխատանք կատարող
Արագածոտնի ՄՓՎ	5	4	57	27	14	17	3		1	8	5	7		
Արարատի ՄՓՎ	1	3	63	24	14	13	4		6	4	4	6	2	13
Արմավիրի ՄՓՎ	1	1	47	21	13	5	4	1	1	8	7	5	2	10
Գեղարքունիքի ՄՓՎ	7	12	72	48	25	15	10	3	2	13	9	6	1	1
Երևանի ՓՎ	13	15	182	140	127	8	5	13	8	39	32	13	4	41
Լոռիի ՄՓՎ	1	10	101	57	30	21	2	3	2	14	9	7	1	19
Կոտայքի ՄՓՎ	2	6	51	44	17	10	5	1	3	12	6	7	2	9

Շիրակի ՄՓՎ		7	87	65	33	25	2	3	4	4	7	6	2	13
Սյունիքի ՄՓՎ	15	14	49	45	15	11	5	3	3	8	7	5	1	12
Վայոց ձորի ՄՓՎ		1	44	25	18	12	3	2	3	4	1	4	1	9
Տավուշի ՄՓՎ	1	3	54	42	19	7	3	6	2	11	3	6	1	11
Կենտրոնական ապարատ	9	23	79	166	54	152	102	36	41	56	61	59	55	107
<b>Ընդամենը</b>	55	99	886	704	379	296	148	71	76	181	151	131	72	245

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ կենտրոնական ապարատի աշխատակիցների շուրջ 10%-ը քաղծառայողներ կամ տեխնիկական աշխատանք կատարողներ են, իսկ 23.8%-ը ունեն ավագ և գլխավոր սպայական կոչումներ (մայոր, փոխգնդապետ, գնդապետ): Ավելին, տարածքային մասնագիտական ստորաբաժանումների համեմատությամբ կենտրոնական ապարատի բարձրագույն սպայական կազմի թիվը առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում: Մասնավորապես ՓԾ 72 գնդապետներից 55-ը, 131 փոխգնդապետներից 59-ը և 181 մայորներից 56-ը ծառայել են ՓԾ կենտրոնական ապարատում:

Ուշագրավ է նաև ՓԾ մի շարք վարչությունների անձնակազմի թվաքանակը, մասնավորապես՝ Թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչությունը /ներառյալ նյութատեխնիկական բազայի անձնակազմը/, ունեցել է թվով 74/24+50/, Ծառայության կազմակերպման վարչությունը՝ թվով 34, իսկ կադրերի վարչությունը՝ 30 աշխատակից:

Վերոնշյալ բաշխվածության հետևանքով ՓԾ-ում առաջացել է նաև աշխատանքի վարձատրության համար կատարվող ծախսերի անհամաչափություն: Մասնավորապես, 2020թ. արդյունքներով աշխատանքի վարձատրություն հողվածով դրամարկղային ծախսը կազմել է 10,447,511 հազ. դրամ, որից 4,033,840,114.50 հազ. դրամը կամ 38.6%-ը բաժին է ընկել ՓԾ կենտրոնական ապարատին, և միայն 61.4%-ը հրշեջ-փրկարարական աշխատանքներ իրականացնող տարածքային ստորաբաժանումներին:

Նման անհամաչափություն է եղել նաև Ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների մասով: Մասնավորապես, ՓԾ առանձնահատկությունների համար տրվող հավելումների կարգի բացակայության հետևանքով հավելավճարներ վճարվել է բոլոր ծառայողներին, անկախ աշխատանքներում նրանց մասնակցությունից, իսկ քանի որ կենտրոնական ապարատում բարձրագույն սպայական կազմը ավելի մեծ կշիռ է կազմել, իսկ բարձրագույն սպայական հավելավճարների գործակիցները ավելի բարձր են եղել 2020թ.-ին ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների ընդհանուր գումարի 31.6%-ը կամ 592,785,302.77 հազ. դրամը վճարվել է կենտրոնական ապարատի փրկարար ծառայողներին, ովքեր Ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել, և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է նաև, որ ՓԾ-ում բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում թվային տեխնոլոգիաների կիրառումը: Օրինակ, ԹՆԱՎ վարչությունում հանդերձանքի տրամադրումը իրականացվել է անհատական թղթային քարտերի և

մատյանների ձեռքով, գրիչով լրացման միջոցով, որը ոչ միայն աշխատատար է, այլև զգալի ռիսկեր կարող է պարունակել, իսկ թվայնացման գործընթացը հնարավորություն կտա ռեսուրսների և աշխատանքային հաստիքների առավել արդյունավետ բաշխում իրականացնել:

**ՀՓՋ-ներում հերթապահություն իրականացնող մարտական հաշվարկների գերակշիռ մասը 6-ի փոխարեն բաղկացած է 4 երբեմն նաև 3 հրշեջ փրկարարից, իսկ ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների բավարար համալրվածություն ապահովելու համար անհրաժեշտ է թվով 501 փրկարար ծառայողի հաստիք: Ի հակադրումն սրա, ՓԾ կենտրոնական ապարատը կազմել է ծառայության ավելի քան 20%-ը, իսկ ապարատի մի շարք վարչություններ ունեցել են թվով 30-ից ավելի հաստիքներ:**

**Միևնույն ժամանակ, տարածքային մասնագիտական ստորաբաժանումների համեմատությամբ կենտրոնական ապարատի ավագ և գլխավոր սպայական կազմի թիվը առավել մեծ տեսակարար կշիռ է կազմել: Վերոնշյալի արդյունքում, ինչպես նաև Ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգի բացակայության հետևանքով, 2020թ.-ին ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների ընդհանուր գումարի 31.6%-ը վճարվել է կենտրոնական ապարատի փրկարար ծառայողներին, ովքեր Ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել, և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:**

### **3.2 Հրշեջ փրկարարական ջոկատների և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տեխնիկական և նյութական հագեցվածությունը**

Համաձայն ՓԾ 2020-2022թթ. ՄԺԾԾ ԱԻՆ ՓԾ համակարգում շահագործվել է ընդհանուր թվով 439 տրանսպորտային միջոց, որոնցից՝


1. Ծառայողական-1
2. Հիմնական հրշեջ -172
3. Հատուկ հրշեջ -31
4. Հիմնական փրկարարական-51
5. Օժանդակ – 98
6. Օպերատիվ և հերթապահ -56
7. Զրահապատ տեխնիկա – 5

ՀՀ ԱԻՆ ՓԾ «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի» կողմից ժամանակավոր անհատույց շահագործման է հանձնվել թվով 51 տրանսպորտային միջոց, որից՝

1. Հիմնական հրշեջ -12
2. Հատուկ փրկարարական – 8
3. Հիմնական փրկարարական -5
4. Օժանդակ – 7

5. Օպերատիվ մարդատար – 5:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՓԾ կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների 73.2%-ը 10-տարի և ավելի հնության են: Մասնավորապես՝ 1%-ը /4 հատ/ 1961-1970թթ., 5%-ը /24 հատ/ 1971-1980թթ., 39%-ը /172 հատ/ 1981-1990թթ., 23%-ը /101 հատ/ 2001-2010թթ. և միայն 26%-ը /114 հատ/ 2011-2020թթ.: Ընդ որում, 2011-2020թթ. արտադրության 114 տրանսպորտային միջոցներից 51-ը Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնին է, և ՓԾ-ին տրամադրվել է ժամանակավոր անհատույց շահագործման նպատակով:



**Գծապատկեր 5: ՓԾ տրանսպորտային միջոցների կազմը**

ՓԾ ավտոտրանսպորտային պարկի թարմացումը իրականացվել է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ: Մասնավորապես, 2016թ. Ճապոնիայի կառավարությունը ՀՀ ԱԻՆ-ին է տրամադրել Գործողությունների կառավարման 6 մեքենա: 2019թ.՝ 10 արագ արձագանքման NISSAN PATROL մեքենաներ՝ համալրված հիդրավլիկ սարքավորումներով, պահեստամասեր, անվադողեր: ՀՀ կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև ստորագրված «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում 2019-2020թթ. տրամադրվել է 40 ավտոմեքենա (36 հրշեջ մեքենա, 3 շարժասանդուղք և 1 միավոր շարժական արհեստանոց)՝ նախատեսված ՀՀ Սյունիքի, Լոռու և Ծիրակի մարզերի համար:

ՄԺԾԾ-ով ՓԾ ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ պահպանման ծախսը պլանավորվել է թվով 451 (որից 37-ը Հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի), իսկ վառելիքի ծախսը՝ թվով 503 (որից 49-ը Հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի) տրանսպորտային միջոցի համար: 2020թ. բյուջետային հայտով նախատեսվել է թվով 460 տրանսպորտային միջոց:

ԱՊՊԱ պայմանագրերի, երթուղային թերթերի և շահագործման քարտերի համադրության արդյունքում պարզվել է, որ ՓԾ կազմում փաստացի շահագործվել է 306 (ԱԻՆ21, ՓԾ 286) տրանսպորտային միջոց: Մասնավորապես, ԱԻՆ մասով ԱՊՊԱ պայմանագիր է կնքվել թվով 21 մեքենաների համար (745.0 հազ. դրամ) այնինչ նախարարությունում հաշվառված է եղել թվով 20 մեքենա, մասնավորապես՝ Audi A6 040vv01 մեքենան ԱԻՆ մեքենաների ցանկում առկա չի եղել, սակայն կնքվել է ԱՊՊԱ պայմանագիր:

Արդյունքում, թվով 174 չշահագործվող տրանսպորտային միջոցի համար ՄԺԾԾ-ով և բյուջետային հայտով նախատեսվել է վառելիքի և պահպանման ծախսեր, թվով 174 տրանսպորտային միջոցի համար ավելի են պլանավորվել պահպանման և վառելիքի ծախսերը:

**ԱԻՆ դիրքորոշում:** ԱԻՆ ՓԾ 174 տրանսպորտային միջոցների համար ՄԺԾԾ-ով և բյուջետային հայտով վառելիքի, պահպանման ծախսերը ավել են պլանավորվել, քանի որ վերջիններս ՓԾ հաշվեկշռից դուրս գրված չեն որպես շահագործման համար ոչ պիտանի և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում նշված մեքենաները ենթակա են վերանորոգման և շահագործման: Ընթացիկ տարվա ընթացքում ՓԾ-ում կարող են լինել անկանխադասելի արտակարգ իրավիճակներ, որոնց դեպքում բնականաբար ավելանում է նաև վառելիքի ծախսը՝ ի հաշիվ պահեստային միջոցների:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ տրանսպորտային միջոցների դուրս գրված չլինելը չի կարող հիմք հանդիսանալ վառելիքի և պահպանման ծախսերի ավելի պլանավորման համար: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել չշահագործվող և ոչ պիտանի տրանսպորտային միջոցները դուրս գրելու ուղղությամբ:

ՓԾ թվով 255 ավտոմեքենաներում տեղադրված է տեղորոշման GPS համակարգ, որից 99-հազեցված է նաև վառելիքի ծախսի վերահսկման (ԴՄԿ) համակարգերով: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ լրացված երթի ուղեգրերում փաստացի վազքը մի շարք դեպքերում չի համապատասխանել GPS համակարգի միջոցով արձանագրված ճանապարհի ցուցանիշի հետ, իսկ վառելիքի ծախսի վերահսկման (ԴՄԿ) համակարգը լիարժեք չի գործել: Արդյունքում նշված համակարգերը երթի և վառելիքի ծախսերի նկատմամբ հսկողության գործընթացում լիարժեք չեն կիրառվել:

**ԱԻՆ դիրքորոշում:** ՓԾ ավտոմեքենաներում տեղադրված տեղորոշման GPS և վառելիքի ծախսի վերահսկման (ԴՄԿ) համակարգերը ունեն թույլատրելի շեղում, որի արդյունքում կարող է արձանագրվել անհամապատասխանություն տեղորոշման GPS համակարգի միջոցով արձանագրված ճանապարհի ցուցիչի և վառելիքի ծախսի վերահսկման (ԴՄԿ) համակարգով գրանցված տվյալների միջև:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ տեղորոշման GPS և վառելիքի ծախսի վերահսկման (ԴՄԿ) համակարգերի արձանագրված տվյալների և լրացված երթի ուղեգրերում փաստացի վազքի տվյալները ոչ միայն դուրս են թույլատրելի շեղման մակարդակից, այլև բազմակի անազամ գերազանցել են այդ ցուցանիշը:

**ՓԾ կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների 73.2%-ը 10-տարի և ավելի հնության են: 2011-2020թթ. արտադրության թվով 114 տրանսպորտային միջոցներից 51-ը Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնինն է, և ՓԾ-ին տրամադրվել է ժամանակավոր անհատույց շահագործման նպատակով: Հին, շահագործումից հանված և ոչ պիտանի թվով 174 տրանսպորտային միջոցի համար նախատեսվել են վառելիքի և պահպանման ծախսեր:**

### 3.3 Փրկարար ծառայողների համազգեստով և հանդերձանքով ապահովումը

2018-2020թթ. փրկարար ծառայողներին հանդերձանքով ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվել է տարեկան 94,216,0 հազ. դրամ:

2018-2020թթ. ՄԺԾԾ հայտի համաձայն հանդերձանքի համար հաշվարկվել է 411,684.0 հազ. դրամ: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 02.02.2006թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևի տալու կարգը և օգտագործման

ժամկետները սահմանելու մասին» թիվ 249-Ն որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՄԺԾԾ և բյուջետային հայտի կազմման ժամանակ հաշվի չի առնվել տարեսկզբի ապրանքային մնացորդները: ՄԺԾԾ հիմքում ընկած ցուցանիշների համար հաշվարկները իրականացվել են Փրկարար ծառայողների թվի հիման վրա՝ ընդհանրական հաշվարկի սկզբունքով:

Աղյուսակ 8.  
հազդրամ

	N	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
2020-2022 թթ. ՄԺԾԾ, ՀՀ կառավարության 02.02.2006թ. թիվ 249-Ն որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա, հազ. դրամ	(1)	375,976.0	761,316.0	826,588.1	411,684.0
Բյուջետային հայտով նախատեսված հազ. դրամ	(2)	82,716.3	99,716.0	94,216.0	94,216.0
Բյուջեից փաստացի հատկացված միջոցներ հազ. դրամ	(3)	82,716.3	94,716.0	94,216.0	94,216.0
Բյուջետային հայտով նախատեսված ֆինանսավորման տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	(4)=(2)/(1) *100 %	22.0	13.1	11.4	22.9
Բյուջեից փաստացի հատկացված միջոցների տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	(5)=(3)/(1) *100 %	22.0	12.4	11.4	22.0

Միաժամանակ, ՓԾ ԹՆԱՎ վարչության կողմից չի ներկայացվել նաև բյուջետային հայտով ներկայացված հանդերձանքի գումարի չափի հիմնավորումը, որը մեկ անգամ ևս փաստում է հաշվառման գործընթացում առկա բարձր ռիսկերի մասին: Արդյունքում, ինչպես երևում է Աղյուսակ 8-ից պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման չափը շուրջ 5 անգամ պակաս է ՄԺԾԾ-ով նախատեսված ֆինանսավորումից, ինչը շարունակվել է վերջին 5 տարիների ընթացքում:

Պլանավորման և ծախսագրման տեսանկյունից խնդրահարույց է նաև ՓԾ նյութական արժեքների շրջանառության կազմակերպումը: Համաձայն Նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից վարվող հաշվառման նյութական արժեքների շրջանառության մատյանի՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ձեռք բերված 96,879.4 հազ. դրամ գումարով 1928 անվանում ապրանքների համար (ընդհանուր 4417 անվանում՝ 393,634.3 հազ. դրամ արժեքով) նյութական արժեքների շարժ տեղի չի ունեցել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փրկարար ծառայողներին հանդերձանքի տրամադրման հաշվառումը իրականացվել է թղթային եղանակով, մատյանների և անհատական թերթիկներում (քարտերում) նշումներ կատարելու միջոցով, ինչը ոչ միայն աշխատատար է, այլև սխալվելու և անհամապատասխանությունների առաջացման էական ռիսկեր է պարունակում:

Միաժամանակ, թե անհատական քարտերը և թե գրանցման մատյանները պահպանվել են ՓԾ ԹՆԱՎ-ում, ինչը ևս հանդերձանքի տրամադրման հսկողության տեսանկյունից կարող է էական խեղաթյուրումների ռիսկեր առաջացնել: Ավելին, հաշվառման գործընթացը քարտային եղանակով կազմակերպելու արդյունքում լրացուցիչ

դժվարություններ են առաջանում պլանավորման աշխատանքների ճշգրիտ կազմակերպման համար: Օրինակ՝ բյուջետային հայտի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ է տվյալները հավաքագրել շուրջ 3400 անհատական թերթիկներից: Նույն խնդիրն առկա է նաև հանդերձանքի ձեռքբերման ժամանակ՝ չափի և տեսակի հստակ պլանավորման տեսանկյունից:

Հանդերձանքի բաշխման գործընթացում արձանագրվել են էական ռիսկեր պարունակող անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության և ՓԾ ԹՆԱՎ վարչության կողմից տրամադրված հաշվետվությունների համադրման արդյունքում արձանագրվել է, որ հանդերձանքի միևնույն տեսակի անվանումը և չափի միավորը երկու ստորաբաժանումների կողմից օգտագործվող ծրագրերում տարբեր է: Օրինակ՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական ծրագրում (ՀԾ) որպես անվանում նշված է «Համազգեստ Հատուկ հանդերձանք և պարագաներ(Քողարկվող համազգեստի լրակազմ)», իսկ չափի միավորը՝ հատ, իսկ ԹՆԱՎ-ի ծրագրում նշված է՝ «Ամենօրյա համազգեստ՝ բաճկոն, տաբատ, կեպի/պիլոտկա» անվանումը, չափի միավորը՝ լրակազմ: Անհամապատասխանություն է արձանագրվել նաև տվյալ համազգեստի ձեռք բերման հաշիվ ապրանքագրում նշված անվանման հետ, որտեղ որպես անվանում նշվել է՝ «Հատուկ հանդերձանք-պարագաներ (ամենօրյա համազգեստ)», իսկ չափի միավորը՝ հատ: ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 979-Ն և թիվ 668-Լ որոշումների հավելված 2-ով որպես չափի միավոր է նշվել հատը կամ լրակազմը: Ընտրանքային կարգով հաշվեքննության ենթարկված 32 գործառնություններից 22-ում արձանագրվել է անվանումների և/կամ քանակների անհամապատասխանություններ, ինչը հաշվառման գործընթացում պարունակում է էական ռիսկեր: Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 979-Ն և թիվ 668-Լ որոշումների պահանջները՝ համազգեստները հիմնականում տրամադրվել է սահմանված ժամկետից ուշ:

Որպես օգնություն ստացված հանդերձանքի 01.01.2020-30.12.2020թթ. հաշվետվության համաձայն, ՓԾ-ին որպես նվիրատվություն փոխանցվել է 15 անվանում հանդերձանք, որից 4-ի ընդհանուր արժեքը կազմել է 16,118.4 հազ. դրամ, մնացած 11-ը պահեստ մուտքագրվել և հաշվառվել են 0, 1, կամ 2 դրամ պայմանական արժեքով: Արդյունքում Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀՀՀՀՀ ստանդարտի 26.54 կետով սահմանված պահանջները:

Փրկարար ծառայողներին ամենօրյա համազգեստի տրամադրումից բացի, ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 30-ի թիվ 668-Լ որոշման 2-րդ հավելվածի համաձայն, ամենօրյա համազգեստից բացի, հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցող փրկարար ծառայողներին տրամադրվել է նաև անհատական պաշտպանական հանդերձանք, մանավորապես՝ Աշխատանքային համազգեստ /կոմբինեզոն/, սաղավարտ,

երկարաճիտք կոշիկներ՝ հրակայուն, և մարտական հագուստ: Որոշման համաձայն, նշված հանդերձանքը հատկացվում է փրկարար ծառայողներին անհատական օգտագործման համար, և օգտագործման ժամկետը կազմում է 5 տարի: Հաշվեքննությանը արձանագրվել է, որ հրդեհաշիջման համար նախատեսված հանդերձանքի անհատական բաշխում հաշվետու ժամանակահատվածում չի իրականացվել, իսկ հանդերձանքը փոխանցվել է ՀՓՋ-ներին՝ ընդհանուր օգտագործման նպատակով:

Միաժամանակ, ՀՀ ԱԻՆ-ում իրականացված 2019թ. գույքագրման արդյունքների<sup>13</sup> վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՓՋ-ներին հատկացված անհատական պաշտպանական միջոցների քանակը զգալի պակաս է հրշեջ-փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի թվաքանակից, իսկ գերակշիռ դեպքերում բավարարում է ընդամենը տվյալ հերթափոխի անձնակազմի քանակին:

### Աղյուսակ 9. Հրշեջ-փրկարարների անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածություն<sup>14</sup>

Ստորաբաժանում	Հրշեջ-փրկարարական աշխատանքների մասնակցող անձինք	Համազգեստ մարտական	Պաշտպանիչ գլխարկ	Համազգեստ կոմբինիզոն	Սաղավարտ	Փրկարարական կոշիկ
Արմվյանի ՀՓՋ	27		18	25	28	6
Ամասիայի ՀՓՋ	30	6			28	22
Անիի ՀՓՋ	31	6	24	24	24	
Աշոցք ՀՓՋ	30	6		19		
Աշտարակի ՀՓՋ	44	20	26	26	19	19
Ապարանի ՀՓՋ	31	6	23	28	29	17
Աջափնյակի թիվ 7 ՀՓՋ	49		33	36	32	25
Արաբկիրի թիվ 5 ՀՓՋ	61		20	24	36	27
Արագածի ՀՓՋ	25	6	12	20	28	17
Արարատի ՀՓՋ	27	10	18	23	20	13
Արթիկի ՀՓՋ	30	6	16	16	22	14
Արմավիրի ՀՓՋ	44	12				16
Արտաշատի ՀՓՋ	45	12	32	32	36	
Բաղրամյանի ՀՓՋ	25	6			34	32
Գավառի ՀՓՋ	37	12	21	40	24	
Գյումրու ՀՓՋ	77	20	21	20	40	27
Գորիսի ՀՓՋ	37	12	18	25	50	
Եղեգնաձորի ՀՓՋ	45			43	32	25
Եղվարդի ՀՓՋ	27	6	12	30	43	43
Էրեբունու թիվ 10 ՀՓՋ	46		12	16	30	27
Էրեբունու թիվ 3 ՀՓՋ	24		6	29	18	12
Թայինի ՀՓՋ	31	8	26	26	29	14
Կապանի ՀՓՋ	43	12		40	29	17
Կենտրոնի թիվ 1 ՀՓՋ	46		31	37	40	40
Կենտրոնի թիվ 8 ՀՓՋ	50		1	40	37	33
Հրազդանի ՀՓՋ	43	12	34	38	41	27
Ճամբարակի ՀՓՋ	32	6	21	25	38	34
Շենգավիթ թիվ 4 ՀՓՋ	49		22	32	25	25
Մասիսի ՀՓՋ	31	6	22	26	35	32
Մարտունի ՀՓՋ	28	6	33	33	29	25
Մեղրի ՀՓՋ	31	38		17	33	32
Նոր Նորքի թիվ 9 ՀՓՋ	48		23	34	20	20
Շենգավիթի թիվ 2 ՀՓՋ	43		24	34		36

<sup>13</sup> Առավել թարմ տվյալներ հաշվեքննության ընթացքում ԱԻՆ կողմից չի տրամադրվել

<sup>14</sup> Կարմիր գույնով ներկվածը՝ անբավարար քանակություն, կանաչ գույնով՝ բավարար քանակություն, մոխրագույն՝ տվյալները բացակայել են:

Շենգավիթի թիվ 6 ՀՓՋ	24		12	22	37	34
Չարենցավանի ՀՓՋ	26	6	23	20	22	19
Ջերմուկի ՀՓՋ	29	6	26	29	23	21
Սևանի ՀՓՋ	34		29	35	29	
Սիսիանի ՀՓՋ	37	35	32	31	35	35
Վաղարշապատի ՀՓՋ	31	12			20	32
Վայքի ՀՓՋ	30		28	28	28	
Վարդենիսի ՀՓՋ	32	6	27	26	27	25
Վեդու ՀՓՋ	26	10	21	22	22	8
Քաջարանի ՀՓՋ	22	6	16	16	16	16
Բերդ ՀՓՋ	35	6	22	33	34	11
Դիլիջանի ՀՓՋ	30	12	17	27	27	26
Իջեվանի ՀՓՋ	44	12	20	33	33	29
Նոյեմբերյանի ՀՓՋ	30	6	34	34	34	34
<b>Ընդամենը</b>	1047	211	574	856	866	732
<b>Պակասուրդ/ընդամենը/</b>		-687	-442	-191	-138	-251

Ինչպես երևում է աղյուսակից, հրդեհաշիջման մարտական համազգեստը 687-ով պակաս է հրշեջ-փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի թվից, 442-ով՝ ծառայողների պաշտպանիչ գլխարկների թիվը, 191-ով՝ համազգեստ կոմբինեզոնը, 138-ով սաղավարտը, և միաժամանակ, առկա է 251 զույգ փրկարարական կոշիկի պակասուրդ: Ընդհանուր առմամբ, հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածությունը կազմել է ընդամենը 30%:

**Փրկարար ծառայողների հանդերձանքով ապահովման համար պետական բյուջեից հարկացված ֆինանսավորման չափը վերջին 5 տարիներին շուրջ 5 անգամ պակաս է պլանավորվածից, ինչի հետևանքով հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածությունը կազմել է ընդամենը 30%:**

## 4. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

*Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝*

- Կանչերի գրանցման գործընթացը
- Կանչերի դասակարգումը և փոխանցումը ՀՓՋ-ներին
- Կանչերի արձագանքումը, սպասարկումը և մոնիթորինգը

### **Ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության վերաբերյալ**

ՀՀ ԱԻՆ ՓԾ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը Նախարարության Ծառայության կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ արդյունավետ կառավարումը, ահազանգերի սպասարկումը, հետևանքների վերացման կառավարումը, իրականացնում Նախարարության, այլ շահագրգիռ մարմինների և գերատեսչությունների տեղեկատվական շուրջօրյա ապահովումը ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների բնագավառում<sup>15</sup>:

Կենտրոնը բաղկացած է 4 բաժիններից.<sup>16</sup>

- 911 ահազանգման կենտրոն,
- օպերատիվ հերթափոխերի բաժին,
- մոնիթորինգի և կանխատեսման բաժին,
- տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժին:

911 ահազանգման կենտրոնում ծառայությունը կազմակերպվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ օպերատիվ հերթափոխի հրահանգի հիման վրա<sup>17</sup>, իսկ հերթապահությունը կազմակերպվում է չորս հերթափոխի միջոցով: ՃԿԱԿ Երևանի կենտրոնում շուրջօրյա հերթապահությունը կազմակերպվել է 32 աշխատակիցների միջոցով, որոնք իրականացրել են 10 հեռախոսային գծի սպասարկում: Հերթափոխը կազմակերպվել է 24 ժամյա սկզբունքով, որից 4 ժամը նախատեսված է հանգստի և սնման համար:

Մարզային փրկարարական վարչություններում հեռախոսային 3 գծի սպասարկումը իրականացվել է թվով 6 աշխատակցի կողմից /ՃԿԱ պետ, ավագ հրահանգիչ, 3 հրահանգիչ և 1 համակարգչային օպերատոր/: Արդյունքում, 10 մարզերում 911 ահազանգման կենտրոնի զանգերին պատասխանելու համար ներգրավված է եղել շուրջ 60 փրկարար ծառայող:

**Աղյուսակ 10. 911 ահազանգման կենտրոնի ստացած զանգերի թիվը ըստ մարզերի և տարիների**

<sup>15</sup> ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրաման, Հավելված 6,


<sup>16</sup> ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրամանի 20-րդ կետ, Հավելված 6


<sup>17</sup> ՀՀ ԱԻՆ նախարարի 2018թ. ապրիլի 17-ի թիվ 387 հրաման, Հավելված 1

	2018թ.	2019թ.	2020թ.
Արագածոտն	64,692	55,175	57,393
Արարատ	106,053	108,711	120,060
Արմավիր	86,677	89,193	106,097
Գեղարքունիք	117,283	136,733	86,685
Կոտայք	92,981	78,517	68,832
Լոռի	143,124	133,877	157,661
Շիրակ	90,355	76,671	82,616
Սյունիք	25,167	29,203	41,987
Տավուշ	62,000	61,932	59,760
Վայոց ձոր	13,608	11,422	21,809
Երևան	1,211,501	1,036,153	855,843
<b>Ընդամենը</b>	<b>2,013,441</b>	<b>1,817,587</b>	<b>1,658,743</b>

Ինչպես երևում է աղյուսակից Երևան քաղաքում արձանագրվել է զանգերի կեսից ավելին, որոնց սպասարկումը սակայն իրականացվել է 2 անգամ ավելի պակաս թվով աշխատակիցների միջոցով:

2018-2020թթ. կանչերի հիմնական մասը արձանագրվել է ժամը 12:00-ից մինչև 22:00 ընկած ժամանակահատվածում: Այս երևույթը գրեթե նույնությամբ կրկնվել է վերջին 3 տարիների ընթացքում:





Ընդ որում, յուրաքանչյուր ժամային միջակայքում արձանագրված կանչերի քանակը գրեթե կայուն է, և տատանվում է տարեկան 500-600-ի միջակայքում, բացառությամբ 2019թ.-ի, երբ արձանագրվել է կանչերի ընդհանուր աճ շուրջ 27%-ով:

Հաշվի առնելով կանչերի դինամիկան և հաճախականությունը, կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար առավել նպատակահարմար է վերակազմակերպել ՃԿԱԿ-ում հերթափոխի իրականացման կարգը, և 24 ժամյա հերթապահության ռեժիմը, այսպիսով 12:00-22:00 ժամանակահատվածում ներգրավել ավելի շատ թվով օպերատորների, իսկ գիշերային՝ համեմատաբար թեթև ժամերին հերթապահության մեջ ունենալ ավելի քիչ թվով օպերատորներ:

**ԱԻՆ դիրքորոշում:** ՃԿԱԿ 911 ԱԿ-ում նշված 32 աշխատակիցները բաշխված են ըստ 4 հերթափոխի, և յուրաքանչյուր հերթափոխում 8 ծառայող 10 հեռախոսագծով ընդունում և սպասարկում է Երևան քաղաքում և երբեմն հարակից մարզերում սրացվող ահազանգերը, որոնք համեմատության առումով ավելի շատ են, իսկ մարզերում նույն գործընթացն իրականացնելու համար ներկայումս ներգրավված է մեկ ծառայող: Մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններում 911 ահազանգման կենտրոններ, որպես այդպիսիք չեն գործում: Նշված գործառնություններն իրականացվում են ՃԿԿ կրպուսեր հրահանգիչների կողմից:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նշված աշխատակիցները փարվա ընթացքում ունենում են հերթական, հիվանդության և երեխայի խնամքի արձակուրդներ:

Որպես կանոն ահազանգերի գրանցումը կրում է ոչ կանոնավոր բնույթ թե՛ սեզոնային, թե՛ ժամային առումով: Եվրոպական մի շարք երկրներ այս ոլորտում անցել են 3X8 (8-ժամյա աշխատանքային գրաֆիկ) ձևաչափի, սակայն նույնիսկ այս դեպքում գիշերային հերթափոխի թվաքանակը չի նվազեցվել: Այսպիսով, տրամաբանությունից դուրս է համեմատություն անել «ավելի շատ թվով օպերատորների կողմից ավելի քիչ զանգերի սպասարկումը»: Մարզերում՝ անկախ զանգերի քանակից, սպասարկման համար հերթափոխում առնվազն երկու օպերատոր ունենալն անհրաժեշտություն է՝ անգամ զանգերի բացակայության դեպքում:

Կապված «ժամը 12:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում կանչերի հիմնական մասի արձանագրված լինելու» վիճակագրական տվյալների հետ՝ արտակարգ դեպքերի, պատահարների սպասարկման համար անձնակազմը պետք է լինի միշտ պատրաստ և համալրված՝ անկախ փարվա եղանակից, օրվա ժամից: Այսպես նաև պետք է հաշվի առնել երկրին սպառնացող ԱԻ-ներն ու ռազմաքաղաքական իրավիճակը: Ի վերջո, արտակարգ դեպքերի սպասարկումն ու արձագանքումը չպիտի պայմանավորված լինի վիճակագրական տվյալների վերլուծությամբ:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ վերջին տարիների ուսումնասիրությունը ցույց է տվել կանչերի արձանագրման ժամային բաշխվածության համաչափություններ, որոնք համամասնորեն կրկնվել են հաշվեքու ժամանակահատվածում: Ելնելով իրականացված ուսումնասիրություններից առաջարկվել է խորացնել իրականացված ուսումնասիրությունը և մշակել ու ներդնել հերթապահությունների իրականացման առավել արդյունավետ համակարգ:

**Հաշվի առնելով կանչերի դինամիկան և հաճախականությունը, կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար առավել նպատակահարմար է վերակազմակերպել ՃԿԱԿ-ում հերթափոխի իրականացման կարգը, և 24 ժամյա հերթապահության ռեժիմը, այդպիսով 12:00-22:00 ժամանակահատվածում ներգրավել ավելի շատ թվով օպերատորների, իսկ գիշերային՝ համեմատաբար թեթև ժամերին, հերթապահության մեջ ունենալ ավելի քիչ թվով օպերատորներ:**

#### 4.1 Կանչերի գրանցման գործընթացը

ՃԿԱԿ-ում արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգերն ու տեղեկատվությունն ընդունվում են ԱԿ-ի հերթապահ մասում՝ «911» հեռախոսահամարներին, ֆիքսված և ուղիղ հեռախոսակապերով, ռադիոկապով, «SMS» հաղորդագրություններով, ավտոմատացված ազդանշանային ու այլ համակարգերով: Ահազանգերը գրանցվում են ահազանգի սպասարկման համար նախատեսված և կարգով<sup>18</sup> հաստատված Ձև 1 և Ձև 5 ահազանգերի գրանցման ձևայնացված փաստաթղթերում (այսուհետ՝ բլանկ)՝ տվյալ ահազանգը սպասարկող պաշտոնատար անձի կողմից:

«911» օպերատորը (իրահանգիչ («911» դիսպետչերը)), ահազանգը սպասարկելուց հետո, լրացված բլանկը (առնչության մասով) ստորագրում է՝ ներկայացնելով ավագ դիսպետչերին, ով ստուգելով գրանցման և զետեղված տեղեկատվության ճշտությունը՝ ստորագրում է բլանկի համապատասխան հատվածում՝ ըստ հերթական համարի համարակալելով բլանկը, լրացնում տվյալ դեպքին առնչվող ի լրումն տեղեկատվությունը:

ՃԿԱԿ-ի մեկ այլ «911» օպերատորի մոտ ստացված նույն արտակարգ դեպքին, պատահարին առնչվող ահազանգերը գրանցվում են յուրաքանչյուրը նոր բլանկում և կցվում տվյալ արտակարգ դեպքին, պատահարին առնչվող առաջինը լրացված բլանկին:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փաստացի ՃԿԱԿ-ում կանչերի սպասարկումը իրականացվել է սովորական գրասենյակային հեռախոսների միջոցով, իսկ կանչի արձանագրումը և վարումը բլանկի վրա ձեռքով լրացնելու միջոցով: Կենտրոնում բացակայել են կանչերի կենտրոնին բնորոշ հարմարեցված ականջակալ-խոսափողները, զանգի գրանցման և փոխանցման ավտոմատացման համակարգերը:

Կենտրոնում պիլոտային կարգով կիրառվել է կանչերի արձանագրման ավտոմատացման ծրագրային փաթեթ, որը սակայն տեխնիկական թերությունների պատճառով չի կիրառվել, իսկ զանգերի արձագանքման ողջ գործընթացը իրականացվել է

<sup>18</sup> ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրաման

ծեռքի աշխատանքի միջոցով, ինչը ոչ միայն աշխատատար է և ժամանակատար, այլև հաշվետվողականության առումով ճկուն չէ:

ՃԿԱԿ-ում առկա չէ նաև կանչերի տեղորոշման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն կտար ոչ միայն բարձրացնել կանչերի գրանցման և արձագանքման արդյունավետությունը, այլև հնարավորություն կտար նվազեցնել կեղծ կանչերի վրա ծախսվող ռեսուրսները:

**ԱԻՆ դիրքորոշում:** 2020 թվականի օգոստոս ամսից ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի 911 ահազանգման կենտրոնում մասնակիորեն ներդրվել է «Ձանգերի կառավարման ավտոմատացված համակարգ» ծրագիրը: ՃԿԱԿ կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք մասնագետների կողմից ընդունվել են, կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ծրագրի ենթաբաժինների փարբեր շրջանարաններում անհրաժեշտ աջակցող փվյալների մուտքագրման և հեփագա բարելավմանն ուղղված աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Շահագործման ընթացքում առաջացան խնդիրներ, որոնք հիմնականում կապված էին տեխնիկական հագեցվածության հետ: Ի վերջո 2020թ. դեկտեմբերի 25-ից Ծրագրի աշխատանքները ժամանակավորապես դադարեցվեցին: Տեխնիկական խնդիրների լուծման համար ներկայացվել է համապատասխան զեկուցագիր:

Նախկինում ևս առաջարկվել է ներդնել ահազանգերի սպասարկման ավտոմատացված համակարգ. առաջարկը ներկայացվել է դոնոր կազմակերպությունների և ծրագրային գրասենյակներ: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ծրագրերը կամ մնացել են անավարտ, կամ ընդհանրապես ընթացք չի տրվել: Հեռանկարում նախատեսվում է 911 ահազանգման կենտրոնում ներդրվելիք ավտոմատացված ծրագրի ենթաբաժիններում ունենալ նաև ահազանգողի տեղորոշման բաղադրիչ:

**Հաշվեքննողի արձագանք:** Ընդունվել է ի գիտություն և կիրականացվի հետիսկողություն:

2018-2020թթ. ընթացքում ՃԿԱԿ-ի և մարզային ՃԿԿ-ների միջոցով սպասարկվել է համապատասխանաբար 2018-ին՝ 2,013,441, 2019-ին՝ 1,817,587 և 2020-ին՝ 1,658,743 զանգ: Ընդ որում զանգերի շուրջ 60%-ը ստացվել է ՃԿԱԿ-ում:

### Աղյուսակ 11. Ձանգերի ամբողջական վիճակագրությունը

	Ընդամենը զանգերի թիվ			Ընդամենը կանչերի թիվ			Ընդամենը զանգեր/ընդամենը կանչեր		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Արագածոտն	64,692	55,175	57,393	834	1,044	891	78	53	64
Արարատ	106,053	108,711	120,060	774	1,307	1,138	137	83	106
Արմավիր	86,677	89,193	106,097	604	978	961	144	91	110
Գեղարքունիք	117,283	136,733	86,685	501	465	563	234	294	154
Կոտայք	92,981	78,517	68,832	1,488	1,519	1,341	62	52	51
Լոռի	143,124	133,877	157,661	596	1,228	1,213	240	109	130
Շիրակ	90,355	76,671	82,616	760	953	909	119	80	91
Սյունիք	25,167	29,203	41,987	769	996	814	33	29	52
Տավուշ	62,000	61,932	59,760	352	818	607	176	76	98
Վայոց ձոր	13,608	11,422	21,809	342	425	473	40	27	46
Երևան	1,211,501	1,036,153	855,843	12,070	14,894	12,798	100	70	67
<b>Ընդամենը</b>	<b>2,013,441</b>	<b>1,817,587</b>	<b>1,658,743</b>	<b>19,090</b>	<b>24,627</b>	<b>21,708</b>			

Ինչպես երևում է աղյուսակից, 2018-2020թթ. ընթացքում զանգերի թիվը միջինում գերազանցել է կանչերի թիվը շուրջ 100 անգամ, կամ որ նույնն է միջինում յուրաքանչյուր 100 զանգից միայն 1 է վերակերպվում կանչի:

**2018-2020թթ. ընթացքում զանգերի թիվը միջինում գերազանցել է կանչերի թիվը շուրջ 100 անգամ, կամ որ նույնն է միջինում յուրաքանչյուր 100 զանգից միայն 1 է վերակերպվում կանչի:**

**ՃԿԱԿ-ում զանգերի գրանցման ողջ գործընթացն իրականացվել է ձեռքի աշխատանքի միջոցով, չի եղել կանչերի տեղորոշման և տվյալների փոխանցման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն կտար ոչ միայն բարձրացնել կանչերի գրանցման և արձագանքման արդյունավետությունը, այլև նվազեցնել կեղծ կանչերի վրա ծախսվող ռեսուրսները:**

**4.2 Կանչերի դասակարգումը և փոխանցումը ՀՓՋ-ներին**

Կանչի արձանագրումից հետո 911 կենտրոնի դիսպետչերի կողմից գնահատվում է կանչի վտանգավորության աստիճանը և ներքին ռադիոկապի միջոցով կանչը փոխանցվում է ՀՓՋ-ներին:

Կանչերի դասակարգումը իրականացվում է համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. նոյեմբերի 26-ի թիվ 1513-Ն հրամանի, ըստ որի տարբերակում ենք.

<p><b>Երևան քաղաքի համար՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- թիվ 1 կանչ - երկու մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 1 բիս կանչ – չորս մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 2 կանչ - վեց մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 3 կանչ - տասը մարտական հաշվարկ</li> </ul>	<p><b>ՀՀ մարզերի համար՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- թիվ 1 կանչ - երկու մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 2 կանչ – չորս մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 3 կանչ – ութ մարտական հաշվարկ</li> </ul>
<p><b>Հայկական ատոմային էլեկտրակայանի համար՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- թիվ 4 կանչ – քսան մարտական հաշվարկ</li> <li>- թիվ 4 բիս կանչ – քառասուն մարտական հաշվարկ</li> </ul>	

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 17 մարտի 2014թ. թիվ 78-Ն համանի՝ սահմանվել է շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության կանոնները, որի շրջանակներում դասակարգվում է կառույցների հրդեհային վտանգավորության աստիճանը, իսկ յուրաքանչյուր տարի ՓԾ կողմից կազմվում է «ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ, ՔԻՄԻԱՊԵՍ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ» ցանկ: Միաժամանակ, ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. նոյեմբերի 26-ի թիվ 1513-Ն հրամանի համաձայն սահմանվել է «ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» կարգը:

Վերոնշյալ նորմատիվ իրավական փաստաթղթերի հիման վրա, ՓԾ տնօրենի 2020թ. հոկտեմբերի 12-ի թիվ 17/1143 հրամանի համաձայն սահմանվել է «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ

ՎԹԱՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ» կարգը, որով սահմանվում է ՀՓՋ-ների սպասարկման տարածքները և կանչերի արձագանքման չվացուցակը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թեև վերոնշյալ իրավակարգավորումներով սահմանվել է հրդեհավտանգ օբյեկտների ցանկը և դրանց դեպքում ըստ չվացուցակի արձագանքման աստիճանը, սակայն կանչի աստիճանի որոշման ավտոմատացված համակարգ առկա չէ, իսկ աստիճանի որոշումը փաստացի իրականացվել է դիսպետչերի կողմից՝ ահազանգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա:

Միևնույն ժամանակ, ՓԾ ավտոմեքենաների հիմնական մասը կահավորված են GPS նավիգացիոն համակարգերով, որոնք կիրառվում են ավտոմեքենաների տեղորոշման և ուղորդման համար: Սակայն, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ահազանգի տեղորոշում գեոլոկացիոն քարտեզի վրա, դրա միջոցով մարտական հաշվարկի ավտոմատ ուղորդում և տեղորոշում, ինչպես նաև առավել նպատակահարմար ճանապարհի որոշում չի իրականացվել:

**ԱԻՆ դիրքորոշում:** Չվացուցակով կանչի աստիճանի ավտոմատ որոշումն ընդունվում է 911 ահազանգման կենտրոնի դիսպետչերի կողմից՝ համաձայն ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. հոկտեմբերի 12-ի թիվ 17/1143 հրամանի, իսկ դեպքի վայրում կանչի աստիճանը որոշում, հաստատում կամ չեղարկում է հրդեհաշիջման (աշխատանքների) ղեկավարը: Դա մշտապես, այդ թվում նաև զարգացած երկրներում եղել է այդպես, թե՛ ահազանգը սպասարկելիս, թե՛ դեպքի վայրում ահազանգի, դեպքի, պատահարի բարդության աստիճանը որոշում է լիազորված պաշտոնատար անձը:

ՃԿԱԿ-ում ահազանգի տեղորոշման հնարավորությունն դեռևս չկա: Մարտական հաշվարկների ուղորդում դեպի դեպքի վայր իրականացվում է դիսպետչերների կողմից, այդ թվում օգտագործելով նաև GPS-ների հնարավորությունը:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ ավտոմատացման համակարգի ներդրման արդյունքում հնարավոր կլինի չվացուցակները վերբեռնել համակարգ և այդպիսով ավտոմատացնել նաև կանչի աստիճանի որոշումը, իհարկե հնարավորություն տալով դիսպետչերին անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան կարգաբերումներ:

ՃԿԱԿ կողմից կիրառվող թվային քարտեզները և գեոլոկացիոն համակարգերը ոչ լիարժեք են և սահմանափակ հնարավորություններով: Մասնավորապես, կիրառվող համակարգերը հնարավորություն են տալիս դիսպետչերին տեսնել միայն ավտոմեքենայի գտնվելու վայրը և ՀՓՋ-ների տեղակայման վայրերը, իսկ արտակարգ դեպքի վայրը, վտանգավոր օբյեկտների ցանկը, ջրի լիցքավորման կետերը և Մարտական հաշվարկի համար կարևոր այլ տեղեկություններ հասանելի չեն:

**Կանչի աստիճանի որոշման ավտոմատացված համակարգ չի եղել, իսկ աստիճանի որոշումը փաստացի իրականացվել է դիսպետչերի կողմից՝ ահազանգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա, իսկ ՃԿԱԿ կողմից կիրառվող թվային քարտեզները և գեոլոկացիոն համակարգերը ոչ լիարժեք են և ունեցել են սահմանափակ հնարավորություններ:**

#### 4.3 Կանչերի արձագանքումը, սպասարկումը և մոնիթորինգը

ՃԿԱԿ-ի կամ մարզային ՃԿԿ-ի կողմից ահազանգը ստանալուց հետո կանչի բնույթին և աստճանին համապատասխան մարտական հաշվարկը մեկնում է դեպքի վայր

և իրականացնում հրշեջ-փրկարարական աշխատանքներ: Դեպքի վայր մեկնելու և գործողությունների իրականացման ժամանակահատվածները փոխանցվում են ՃԿԱԿ-ին և արձանագրվում կանչի թերթիկում:

2018թ. պետական բյուջեում սահմանվել է ընդամենը մեկ արդյունքային չափորոշիչ՝ ահազանգի ստացման պահից մինչև մեկնում՝ 50 վայրկյան: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2018թ. արդյունքներով նշված չափորոշիչը չի պահպանվել, իսկ փաստացի ցուցանիշը առանձին ստորաբաժանումներում շեղվել է 3-10 անգամ:

2019 և 2020 թվականների համար սահմանվել է 3 արդյունքային չափորոշիչ.

1. Ահազանգի ստացման պահից մինչև մեկնում՝ **8 րոպե**
2. Ահազանգի ստացման պահից մինչև կանչի վայր՝ **24 րոպե**
3. Ահազանգի ստացման պահից մինչև գործողությունների ավարտ՝ **1 ժամ 29 րոպե:**

2019-2020թթ. ընթացքում միջինացված տվյալներով բոլոր արդյունքային չափորոշիչները բացառությամբ 1 դեպքի (T 1 Կոտայքի մարզ) պահպանվել են: Ավելին, ստորև ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ հաստատված չափորոշիչները վերանայման լուրջ կարիք ունեն, քանի որ փաստացի միջին ցուցանիշները զգալի պակաս են չափորոշիչով սահմանված ժամանակահատվածից:

**ԱԻՆ դիրքորոշում:** Ահազանգի ստացման պահից մինչև մեկնման, ահազանգի ստացման պահից մինչև կանչի վայր հասնելու և ահազանգի ստացման պահից մինչև գործողությունների ավարտի ժամանակահատվածի արժեքը կախված է արտակարգ դեպքի տեսակից, արտակարգ դեպքին արձագանքելու առաջնահերթությունից և տվյալ հրշեջ-փրկարարական ջոկատում առկա տեխնիկական լուծումներից: Ինչպես նաև անհրաժեշտ է փարանջատել հրդեհի կանչերը՝ կենցաղային, փրկարարական և այլ բնույթի կանչերից:

**Հաշվեքննողի արձագանք:** Չի ընդունվել, քանի որ թեև դիրքորոշման մեջ ներկայացված հիմանավորումները իրավացի են, սակայն անհրաժեշտ է մշակել նորմատիվների բազմագործոն համակարգ, որը հնարավորություն կտա ունենալ նորմատիվներ նշված բոլոր սցենարների համար:

**Աղյուսակ 12: Ահազանգ-մեկնում-կանչի վայր ժամանակահատվածի ցուցանիշները 2018-2020թթ. րոպե:վայրկյան**

	T1 (ահազանգ-մեկնում)			T2 (ահազանգ-կանչի վայր)			T3 (մեկնում-կանչի վայր)		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Արագածոտն	05:55	03:30	03:02	21:21	17:13	16:05	15:25	13:14	13:59
Արարատ	04:07	03:02	04:25	17:54	14:46	16:17	13:46	11:44	11:51
Արմավիր	02:44	03:34	02:08	13:32	16:07	12:50	10:51	12:39	10:41
Գեղարքունիք	09:00	03:19	03:03	23:07	18:46	10:58	13:56	15:30	07:54
Երևան	05:35	10:12	03:11	14:35	14:07	11:44	10:49	09:34	08:43
Լոռի	04:30	03:58	01:36	18:06	17:05	14:51	13:33	14:18	13:03
Կոտայք	06:17	11:46	04:48	18:20	18:23	16:50	12:37	13:58	13:38
Շիրակ	05:15	02:31	01:55	15:07	16:34	14:28	12:52	14:04	12:34
Սյունիք	08:10	05:52	01:35	24:06	24:02	15:09	15:54	18:02	13:35
Վայոց Ձոր	02:45	03:45	02:07	18:08	22:52	20:02	21:15	22:11	17:56
Տավուշ	05:01	03:03	02:20	17:44	24:40	22:09	12:15	21:33	19:49

Արդյունքային չափորոշիչներից բացի, ԱԻ նախարարի 2019թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1309 հրամանով հաստատվել է հրշեջ-շարային պատրաստության նորմատիվային

ցուցանիշները, որի 3-րդ կետով սահմանվել է Տազնապով հավաք և մեկնում գործողությունը, որի կատարման համար բավարար ցուցանիշ է համարվել ամռանը 45 իսկ ձմռանը 50 վայրկյանը: Այն ջրկատներում, որտեղ գորանոցը գտնվում է 2-րդ հարկում և ունի վայրէջքի սյուն, նորմատիվային ժամանակին ավելացվում է 7, վայրէջքի սյան բացակայության դեպքում՝ 15 վայրկյան: ՈՒՐԱԼ, ԿԱՄԱԶ մակնիշի հրշեջ ավտոմեքենաների մարտական հաշվարկը վարժությունները կատարելիս նորմատիվային ժամանակին ավելացվում է 2 վայրկյան: Արդյունքում տազնապ-մեկնում ժամանակահատվածի համար սահմանված բավարար ժամանակահատվածի առավելագույն տևողությունը 1 րոպե 07 վայրկյան է: Ինչպես երևում է աղյուսակից, 2018-2020թթ. ընթացում նշված նորմատիվը մարզերում և Երևանում չի պահպանվել, իսկ նորմատիվից շեղումը երբեմն կազմել է մինչև 8 րոպե:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ գերակշիռ դեպքերում միջին ցուցանիշները ունեն նվազման միտում, ինչը վկայում է դրական միտումի մասին: Սակայն, տարբեր ստորաբաժանումների միջև համեմատականը ցույց է տալիս, որ ահազանգ-մեկնում ցուցանիշը որոշ մարզերում բարելավման կարիք ունի, հատկապես, որ այս ցուցանիշը պայմանավորող գործոնները կախված չեն արտակարգ դեպքի վայրից և այլ հանգամանքներից:

Կանչի սպասարկման հաջորդ ցուցիչը Մարտական հաշվարկի կանչի վայր հասնելու ժամանակի և հրշեջ-փրկարարական աշխատանքի իրականացման աշխատանքի ավարտման ժամանակահատվածի տարբերությունն է: Ըստ հրշեջ-փրկարարական աշխատանքի իրականացման միջին տևողությունը 2018թ. կազմել է 42 րոպե 51 վայրկյան, 2019թ.՝ 46 րոպե 00 վայրկյան, իսկ 2020թ.՝ 36 րոպե 50 վայրկյան:

Հրշեջ-փրկարարական աշխատանքները առավել արագ իրականացվել են Երևան քաղաքի տարածքային ստորաբաժանումների կողմից, իսկ գործողության միջին տևողությունը 2020թ. կազմել է 26 րոպե 20 վայրկյան: Մարզային ստորաբաժանումներից 2020թ. արդյունքներով առավել օպերատիվ է եղել Արարարտի մարզի մասնագիտական ստորաբաժանման աշխատանքը, իսկ գործողության միջին տևողությունը կազմել է 34 րոպե 30 վայրկյան: Հրշեջ-փրկարարական աշխատանքներն առավել դանդաղ իրականացվել են Լոռու մարզում, որտեղ 2020թ. գործողության միջին տևողությունը կազմել է 1 ժամ 5 րոպե 35 վայրկյան: 2018-2020թթ. բոլոր մարզերի համար տվյալները ներկայացված են ստորև:

**Աղյուսակ 13: Կանչի վայր-գործողությունների ավարտ և Ահազանգ-գործողությունների ավարտ միջին ցուցանիշները 2018-2020թթ. րոպե:վայրկյան**

	T4 (կանչի վայր-գործողության ավարտ)			T5 (ահազանգ-գործողության ավարտ)		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Արագածոտն	47:54	43:24	44:38	01:10:06	01:00:10	1:00:49
Արարատ	48:10	35:23	34:30	01:06:10	50:22	50:25
Արմավիր	37:09	39:26	35:26	50:23	54:21	48:03
Գեղարքունիք	38:47	55:21	50:59	1:03:01	01:12:14	01:08:03

Երևան	24:40	28:55	26:20	36:22	42:22	38:19
Լոռի	59:46	57:30	01:05:35	1:36:11	01:10:44	01:11:15
Կոտայք	44:16	41:30	36:13	1:02:06	59:45	52:49
Շիրակ	56:23	59:54	48:44	1:08:38	1:16:11	01:03:19
Սյունիք	46:45	48:56	48:57	1:03:54	1:11:18	01:07:30
Վայոց Ձոր	53:53	1:08:05	48:49	1:27:58	1:22:07	01:08:40
Տավուշ	38:53	1:04:36	57:45	1:00:01	1:27:30	01:18:44

Ահազանգի ստացման պահից մինչև գործողությունների ավարտը ժամանակահատվածի համար պետական բյուջեում որպես արդյունքային չափորոշիչ սահմանվել է 1 ժամ 29 րոպե: Ինչ վերաբերվում է ահազանգի ստացման պահից մինչև գործողությունների ավարտը ընկած միջին ժամանակահատվածի փաստացի ցուցանիշներին, ապա 2020թ. այն կազմել է 50 րոպե 27 վայրկյան, 2019թ.՝ 56 րոպե 11 վայրկյան, իսկ 2018թ.՝ 1 ժամ 0 րոպե 1 վայրկյան:

ՓԾ-ում կանչերի արձագանքման և դրա արդյունքում իրականացված հրշեջ-փրկարարական աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով արդյունքների վերլուծություն, ինքնագնահատում և համակարգային ուսումնասիրություն չի իրականացվել: Կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման որևէ չափորոշիչ չի սահմանվել և համակարգի գործունեության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել: Ընթացիկ հսկողական միակ գործող մեխանիզմը ծառայողական քննությունների իրականացումն է, որը կազմակերպվում է ՀՀ ԱԻ նախարարի 2017թ. ապրիլի 6-ի N 393 -Ն հրամանով հաստատված «Ծառայողական քննության անցկացման» կարգի համապատասխան: Վերջինիս 10-րդ կետով սահմանվում է Ծառայողական քննություն նշանակելու դեպքերը, որոնց մեջ սակայն նորմատիվների պարբերաբար գերազանցելու համար ծառայողական քննության նշանակման համար չափորոշիչներ չեն սահմանվել:

**Կանչի արձագանքման արդյունավետության գնահատման համար սահմանված արդյունքային չափորոշիչները (նորմատիվները) վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք ակնհայտ բարձր են փաստացի ցուցանիշներից:**

**Կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման որևէ չափորոշիչ չի սահմանվել և համակարգի գործունեության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել:**

## 5. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ


*Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝*

- ՓԾ ելքի ինքնարժեքի հաշվարկը
- Կեղծ կանչերի, փեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների հետևանքով կադրաված ծախսերի հաշվարկը
- Չանգերի ընդունման և կանչերի արձանարման ինքնարժեքի հաշվարկը

ՓԾ կազմակերպման արդյունավետության գնահատման նպատակով հաշվեքնությունն իրականացնող խմբի կողմից ուսումնասիրվել են 2018-2020թթ. ծառայության կազմակերպման վրա իրականացված ծախսերը և դրա արդյունքում արձանագրված արդյունքային ցուցանիշները:

Արդյունավետության գնահատումը և դրանից բխող հաշվարկներն իրականացվել է տարածքային (մարզեր և Երևան քաղաք) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կտրվածքով, քանի որ ծախսային բաղադրիչների համար առանձին ՀՓՋ-ների ծախսերի վերաբերյալ տվյալները եղել են ոչ լիարժեք և գնահատման համար ոչ բավարար արժանահավատ:

Որպես **հիմնական արդյունքային ցուցանիշ կիրառվել է** տարածքային (մարզեր և Երևան քաղաք) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների **արձանագրած ելքերի քանակը**, քանի որ ի տարբերություն կանչերի թվի, ելքերի թիվը առավել բնութագրական են կիրառված ռեսուրսների գնահատման համար:



**Գծապատկեր 6 : Տարածքային ստորաբաժանումների ելքերի դինամիկան 2018-2020թթ.**

Ինչպես երևում է գծապատկերից, դիտարկվող ժամանակահատվածի համար ելքերի դինամիկային բնորոշ է որոշակի սեզոնայնություն և քանակական աճ ամառային ամիսներին:

Որպես **ծախսային ցուցանիշ կիրառվել է** տարածքային (մարզեր և Երևան քաղաք) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից **կանչերի արձագանքման ընթացքում կիրառված ուղղակի ծախսերը՝** անձնակազմի


աշխատավարձ, հանդերձանք, վառելիք, տրանսպորտային նյութեր: Հաշվարկների իրականացման ժամանակ վերադիր ծախսերը և մաշվածությունը չի կիրառվել, հաշվապահական հաշվառման տվյալներում դրանց բացակայության պատճառով:

**Աղյուսակ 14. Տարածքային ստորաբաժանումների ծախսերը**

«Հ դրամ

	2018թ.	2019թ.	2020թ.
Երևան	1,453,942,743	1,905,024,584	2,253,452,029
Լոռի	571,548,336	770,444,650	943,515,276
Շիրակ	536,376,205	726,146,138	882,473,196
Սյունիք	403,365,038	559,539,014	669,617,789
Կոտայք	395,015,228	540,682,037	614,430,350
Տավուշ	378,635,277	505,343,232	592,071,415
Արագածոտն	342,573,789	467,436,181	552,816,514
Արարատ	338,845,552	457,066,608	547,615,101
Վայոց Ձոր	275,058,719	376,459,918	443,435,501
Արմավիր	281,435,620	375,232,319	441,136,465
Գեղարքունիք	518,445,750	703,876,634	856,348,260
Ընդամենը	5,495,242,258	7,387,251,316	8,796,911,894

Ինչպես երևում է աղյուսակից, 2018-2020թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի տեղի է ունեցել ծախսերի ավելացում, ինչը հիմնականում պայմանավորված է եղել փրկարար ծառայողների աշխատանքի վարձատրության ավելացման հաշվին:



**Գծապատկեր 7: Ընդամենը տարեկան ծախսեր**

Ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկել Երևան քաղաքին, իսկ ամենափոքր մասը Արմավիրի մարզին:

Վերլուծության ընթացքում որպես լրացուցիչ կողմնորոշիչ ցուցանիշ օգտագործվել է նաև տարածքային մասնագիտական ստորաբաժանման կազմում ներառված փրկարար ծառայողների թվաքանակը, որը հնարավորություն է տալիս ավելի լավ և ամբողջական պատկերացնել ծախսերի համեմատականը և դինամիկան:

Հիմք ընդունելով ներկայացված ծախսային և արդյունքային ցուցանիշները, իրականացվել է դրանց համադրություն՝ դրամական արտահայտությամբ ընդամենը ծախսերը բաժանելով ելքերի քանակին, ինչը հնարավորություն է տալիս ստանալ

յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանման յուրաքանչյուր տարվա և ամսվա միավոր ելքի համար կատարված միջին ծախսերի հանրագումարը՝ կամ միավոր ելքի ինքնարժեքը: Ընդ որում, հաշվարկներն իրականացվել են ինչպես ամսական այնպես էլ տարեկան կտրվածքով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծախսերի որոշ տեսակներ կրում են ոչ կանոնավոր բնույթ /օրինակ՝ հանդերձանքի և տրանսպորտային նյութերի/, իսկ որոշների ծախսագրումը իրականացվել է ժամանակային շեղումներով /վառելիք/, հետագա վերլուծություններն իրականացվել են հիմք ընդունելով տարեկան ցուցանիշները:


Տարեկան կտրվածքով միավոր ելքի ինքնարժեքի հաշվարկման արդյունքները ներկայացված են աղյուսակ 15-ում:

**Աղյուսակ 15. Ընդամենը ծախսեր/ելքերի քանակ ըստ մարզերի 2018-2020թթ**

«Ձ դրամ

	2018թ.	2019թ.	2020թ.
Երևան	120,459	127,906	176,078
Լոռի	958,974	627,398	777,836
Շիրակ	705,758	761,958	970,818
Սյունիք	524,532	561,786	822,626
Կոտայք	265,467	355,946	458,188
Տավուշ	1,075,668	617,779	975,406
Արագածոտն	410,760	447,736	620,445
Արարատ	437,785	349,707	481,208
Վայոց Ձոր	804,265	885,788	937,496
Արմավիր	465,953	383,673	459,039
Գեղարքունիք	1,034,822	1,513,713	1,521,045

Ինչպես երևում է աղյուսակից, դիտարկվող ժամանակահատվածում ելքի ամենամեծ ինքնարժեքը գրանցվել է Գեղարքունիքի մարզում, որը 2020թ. արդյունքներով կազմել է 1,521.1 հազ դրամ: Նման բարձր ցուցանիշը պայմանավորված է ներգրավված անձնակազմի համեմատաբար մեծ թվաքանակով և արձանագրված ելքերի փոքր թվով:




**Գծապատկեր 8: Ընդամենը ծախսեր/ելքերի քանակ**

Առավել ցածր ինքնարժեք գրանցվել է Երևան քաղաքում, որը 2020թ. արդյունքներով կազմել է 176.1 հազ. դրամ: Երևան քաղաքի ցուցանիշի նման կտրուկ

շեղումը մարզերից պայմանավորված է արձանագրված կանչերի մեծ թվով, որն ավելին է քան բոլոր մարզերը միասին վերցրած:

Համադրելով յուրաքանչյուր ստորաբաժանման ելքի ինքնարժեքը 2018-2020թթ. համար, պարզ է դառնում, որ Երևան քաղաքի, Շիրակի, Սյունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերում յուրաքանչյուր տարի արձանագրվել է ինքնարժեքի ավելացում, որը ևս հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ավելացման հետ: Լոռու, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում 2019 թվականին 2018-ի համեմատությամբ արձանագրվել է 1 ելքի ինքնարժեքի նվազում, որը պայմանավորված է եղել ելքերի քանակի ավելացմամբ, ինչը սակայն չի պահպանվել 2020 թվականին, և արդյունքում 2020թ. միավոր ելքի ինքնարժեքը ավելի բարձր է նախորդող տարիների համեմատությամբ:



**Գծապատկեր 9: Ընդամենը ծախսեր/ելքերի քանակ**

Ներկայացված մեթոդաբանության կիրառմամբ իրականացվել է նաև ամբողջ հանրապետության տարածքում ելքերի համար միասնական միջին ելքի ինքնարժեքի հաշվարկ, որն իրականացվել է տարածքային ստորաբաժանումների միջին ինքնարժեքի և ելքերի թվի կիրառման միջոցով, կշռված միջին թվաբանականի հաշվարկման սկզբունքով: Արդյունքում, արձանագրվել է, որ 2018-2020թթ. հանրապետությունում միավոր ելքի միջին ինքնարժեքը ըստ տարիների կազմել է համապատասխանաբար 2018թ-ին՝ 287,859 դրամ, 2019թ-ին՝ 299,965 դրամ և 2020թ.-ին՝ 405,238 դրամ, իսկ վերջին 3 տարիների կտրվածքով՝ 2018-2020թթ. միավոր կանչի միջին ինքնարժեքը կազել է 331,362 դրամ:

Հաշվեքննության նախորդ բաժնում ներկայացվել էր, որ ազդանշման սարքերի կողմից կեղծ ահազանգի հետևանքով 2018-2020թթ. ՓԾ տարածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է ընդհանուր 1244 ելք: Կեղծ կանչով պայմանավորված ծախսը ըստ մարզերի և տարիների ներկայացված է ստորև:

**Աղյուսակ 16. Ազդանշման սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերի արժեքի հաշվարկ**

	2018	2019	2020	Միավոր կանչի ինքնարժեքը ըստ մարզերի և տարիների	Կեղծ կանչով պայմանավորված ծախսն ըստ մարզերի
<b>Ընդհանուր</b>	978	1275	1572		

Կեղծ ելք									
ազդանշող սարքեր կեղծ ելք	399	403	783						
Այդ թվում՝				2018	2019	2020	2018	2019	2020
Երևան	297	292	578	120,459	127,906	176,078	35,776,387	37,348,407	101,773,345.27
Շիրակ	15	12	15	705,758	761,958	970,818	10,586,372	9,143,498	14,562,263.96
Սյունիք	8	8	13	524,532	561,786	822,626	4,196,255	4,494,289	10,694,141.59
Կոտայք	15	24	49	265,467	355,946	458,188	3,982,008	8,542,705	22,451,220.83
Տավուշ	2	4	16	1,075,668	617,779	975,406	2,151,337	2,471,116	15,606,495.28
Արագածոտն	26	7	16	410,760	447,736	620,445	10,679,758	3,134,151	9,927,120.34
Արարատ	9	20	26	437,785	349,707	481,208	3,940,065	6,994,133	12,511,417.07
Վայոց Ձոր	13	10	32	804,265	885,788	937,496	10,455,448	8,857,880	29,999,864.73
Արմավիր	3	12	18	465,953	383,673	459,039	1,397,859	4,604,078	8,262,701.75
Գեղարքունիք	4	2	7	1,034,822	1,513,713	1,521,045	4,139,287	3,027,426	10,647,314.06
Ընդամենը տարեկան							94,017,594	96,146,459	246,547,755.09
<b>Ընդամենը 2018-2020թթ.</b>									436,711,808.13

Այսպիսով, ինչպես երևում է աղյուսակից, 2018-2020թթ. ազդանշող սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերը կազմել են ընդհանուր ելքերի շուրջ 10%-ը, որի հետևանքով ՓԾ կատարել է 436,711,808.13 հազ դրամի ծախս:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2018թ.-ին 1054, 2019թ.-ին՝ 1609 և 2020թ.-ին 1124 ելքերի համար կանչի վայր հասնելուց հետո կամ հրդեհը ինքնամարվել է, կամ արդեն իսկ մարվել է տեղի ուժերով նախքան մարտական հաշվարկի դեպքի վայր ժամանելը: Վերոնշյալով պայմանավորված կատարված ծախսը ըստ մարզերի և տարիների ներկայացված է աղյուսակ 17-ում:

**Աղյուսակ 17. Տեղի ուժերով մարված կամ ինքնամարված հրդեհի հետևանքով ելքի ինքնարժեքի հաշվարկ**

	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Արագածոտն	56	73	66	410,760	447,736	620,445	23,002,557	32,684,714	40,949,371.38
Արարատ	48	135	127	437,785	349,707	481,208	21,013,678	47,210,399	61,113,460.29
Արմավիր	46	107	84	465,953	383,673	459,039	21,433,839	41,053,025	38,559,274.81
Գեղարքունիք	18	23	22	1,034,822	1,513,713	1,521,045	18,626,793	34,815,403	33,462,987.06
Երևան	779	1069	1048	120,459	127,906	176,078	93,837,730	136,730,984	184,530,217.72
Լոռի	39	77	56	958,974	627,398	777,836	37,399,975	48,309,640	43,558,825.60
Կոտայք	142	206	201	265,467	355,946	458,188	37,696,346	73,324,885	92,095,824.21
Շիրակ	175	47	39	705,758	761,958	970,818	123,507,679	35,812,034	37,861,886.29
Սյունիք	54	61	37	524,532	561,786	822,626	28,324,723	34,268,956	30,437,172.21
Վայոց ձոր	25	35	40	804,265	885,788	937,496	20,106,631	31,002,581	37,499,830.91
Տավուշ	22	65	49	1,075,668	617,779	975,406	23,664,705	40,155,636	47,794,891.79
Ընդամենը տարեկան							448,614,655	555,368,257	647,863,742.26
<b>Ընդամենը 2018-2020թթ.</b>									1,651,846,654.62

Այսպիսով, 2018-2020թթ.. տեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների համար կատարված ելքերի թիվը կազմել է ընդհանուր ելքերի շուրջ 7-8%-ը, որի հետևանքով **ՓԾ կատարել է 1,651,846.6 հազ. դրամի ծախս:**

Կիրառված մեթոդաբանությամբ անհրաժեշտ է հաշվարկել նաև հանրապետությունում իրականացվող մասսայական տարբեր միջոցառումների, համերգների, սպորտային և մարզական միջոցառումների, կորպորատիվ մասշտաբային ծրագրերի իրականացման ժամանակ ՓԾ մարտական հաշվարկի հերթապահության համար կատարված ծախսերի հաշվարկ, սակայն այն հնարավոր չի եղել իրականացնել՝ ՓԾ կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված հերթապահությունների հաշվառում չիրականացնելու պատճառով:

Հաշվեքննության շրջանակներում ՓԾ ծախսային արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է նաև կանչերի արձանագրման ինքնարժեքի հաշվարկ, որը իրականացվել է 2 բաղադրիչով՝ 911 ահազանգման կենտրոնի ստացած զանգերի թվի և դրա արդյունքում արձանագրված կանչերի թվի համար: Հաշվարկման ծախսային բաղադրիչի մեջ ներառվել են երևան քաղաքի ՃԿԱԿ աշխատանքի վարձատրությունը և հաշվապահական հաշվառման միջոցով հատկացված նյութածախսը, իսկ մարզերի դեպքում Մարզային ՃԿԿ աշխատանքի վարձատրությունը և աշխատակիցների հանդերձանքի միջին ծախսն ըստ աշխատակիցների թվի: Իրականացված հաշվարկները ներկայացված են աղյուսակ 18-ում:

**Աղյուսակ 18. ՃԿԱԿ կողմից զանգերի և կանչերի գրանցման ինքնարժեքի հաշվարկ**

		2018թ.	2019թ.	2020թ.
Զանգերի թիվը	Երևան	1,211,501	1,036,153	855,843
	Մարզեր	801,940	781,434	802,900
Կանչերի թիվը	Երևան	12,070	14,894	12,798
	Մարզեր	7,020	9,733	8,910
Զանգի ինքնարժեք (դրամ)	Երևան	265	372	376
	Մարզեր	489	502	488
Կանչի գրանցման ինքնարժեք (դրամ)	Երևան	26,628	25,893	25,115
	Մարզեր	55,863	40,292	44,013

Ինչպես երևում է աղյուսակից, 2020թ. Երևան քաղաքում մեկ զանգի ինքնարժեքը կազմել է 376 դրամ, իսկ մեկ կանչի գրանցման ինքնարժեքը 25.1 հազ. դրամ: Ի տարբերություն Երևան քաղաքի, բոլոր մարզերում մեկ զանգի ինքնարժեքը կազմել է 488 դրամ, իսկ մեկ կանչի գրանցման ինքնարժեքը՝ 44.1 հազ. դրամ:

**Փրկարար ծառայության ծախսային արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է ելքի ինքնարժեքի (ծախսեր/ելքի քանակ) հաշվարկ: 2020թ. մեկ մարտական հաշվարկի ելքի ամենամեծ ինքնարժեքը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 1,521.1 հազ դրամ, իսկ ամենացածրը՝ Երևան քաղաքում՝ 176.1 հազ. դրամ: ՓԾ միավոր ելքի միջին ինքնարժեքը 2018-2020թթ. կազմել է 331,362 դրամ:**

**Ազդանշող սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերի հետևանքով ՓԾ 2018-2020թթ. կատարել է 436,711,808.13 հազ. դրամի ծախս, տեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների համար՝ 1,651,846.6 հազ. դրամի ծախս:**

**Ծախսային արդյունավետության գնահատման նպատակով հաշվարկվել է նաև ՃԿԱԿ կողմից զանգերի ընդունման և կանչերի արձանագրման ինքնարժեքը:**

**Մեկ զանգի սպասարկման ինքնարժեքը Երևան քաղաքում կազմել է 376 դրամ, մարզերում՝ 488 դրամ, իսկ մեկ կանչի արձանագրման ինքնարժեքը համապատասխանաբար՝ 25.1 հազ. դրամ և 44.1 հազ. դրամ:**

## 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության իրականացման նպատակն է ՀՀ-ում ՓԾ կազմակերպման գործառույթի գնահատումը, գործընթացում առկա խնդիրների վեր հանումը և լուծման ուղիների որոնումը:

Հաշվեքննության նպատակներին հասնելու համար Հաշվեքննիչ պալատն առաջադրել և կենտրոնացել է հետևյալ խնդիրների լուծման վրա.

- ինչպե՞ս է իրականացվել փրկարար ծառայության պլանավորման աշխատանքները,
- ինչպե՞ս է կատարվել փրկարար ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացը,
- որքանո՞վ է արդյունավետ փրկարար ծառայությունների կազմակերպումը:

ՀՀ-ում վերջին տասնամյակում արձանագրվել է արտակարգ դեպքերի աճ, որի շուրջ 70%-ը, բաժին է ընկել տեխնածին դեպքերին: Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում հրշեջ մեքենաների թիվը 27-ով պակաս է քաղաքաշինության նորմերով սահմանված քանակից, իսկ Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններում ՀՓՋ-ներ տեղակայված չեն:

Հաշվեքննությամբ արձանագրվել են մի շարք դեպքեր, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ ՓԾ գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես՝

- Հրշեջ փրկարարական ջոկատներում հերթապահություն իրականացնող մարտական հաշվարկների գերակշիռ մասը 6-ի փոխարեն բաղկացած է 4 երբեմն նաև 3 հրշեջ փրկարարից, իսկ ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների բավարար համալրվածություն ապահովելու համար անհրաժեշտ է 501 փրկարար ծառայողի հաստիք: Ի հակադրումն սրա, ՓԾ կենտրոնական ապարատը կազմում է ծառայության ավելի քան 20%-ը, իսկ ապարատի մի շարք վարչություններ ունեն 30-ից ավելի հաստիքներ:
- Տարածքային մասնագիտական ստորաբաժանումների համեմատությամբ կենտրոնական ապարատի բարձրագույն սպայական կազմի թիվը առավել մեծ տեսակարար կշիռ է կազմել, որի հետևանքով, ինչպես նաև Ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգի բացակայության հետևանքով, 2020թ.-ին ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների ընդհանուր գումարի 31.6%-ը կամ 592,785.4 հազ. դրամը վճարվել է կենտրոնական ապարատի փրկարար ծառայողներին, ովքեր Ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել, և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:
- ՓԾ կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների 73.2%-ը 10-տարի և ավելի հնության են: Ընդ որում, 2011-2020թթ. արտադրության 114 տրանսպորտային միջոցներից 51-ը Ռուս-հայկական մարդասիրական

արձագանքման կենտրոնին է, և ՓԾ-ին տրամադրվել է ժամանակավոր, անհատույց շահագործման նպատակով: Ավելին, հին և շահագործումից հանված թվով 174 տրանսպորտային միջոցի համար նախատեսվել է վառելիքի և պահպանման ծախսեր, սակայն մեքենաները չեն շահագործվել, իսկ պահպանման և վառելիքի ծախսերը ավելի են պլանավորվել:

- Փրկարար ծառայողների հանդերձանքով ապահովման համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման չափը վերջին 5 տարիներին շուրջ 5 անգամ պակաս է պլանավորվածից, ինչի հետևանքով հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածությունը կազմել է ընդամենը 30%:
- Հրշեջ փրկարարական ջոկատների կողմից իրականացված ընդհանուր ելքերի շուրջ 8%-ի դեպքում հրդեհը մարվել է ինքնուրույն կամ տեղի ուժերով՝ նախքան մարտական հաշվարկի ահազանգման վայր հասնելը:
- Կեղծ ահազանգով պայմանավորված ելքերի թիվը 2018-2019թթ. կազմել է ընդհանուր ելքերի շուրջ 7%-ը, որի շուրջ կեսը արձանագրվել է հրդեհների ահազանգման համակարգերի միջոցով: ՀՓՁ-ներից 42-ում ծանրաբեռնվածությունը ցածր է, 13-ում՝ միջին, իսկ 5-ում՝ բարձր:
- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում զանգերի գրանցման ողջ գործընթացն իրականացվել է ձեռքի աշխատանքի միջոցով, չի եղել կանչերի տեղորոշման և տվյալների փոխանցման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն կտար ոչ միայն բարձրացնել կանչերի գրանցման և արձագանքման արդյունավետությունը, այլև նվազեցնել կեղծ կանչերի վրա ծախսվող ռեսուրսները:
- Կանչի աստիճանի որոշման ավտոմատացված համակարգ չի եղել, աստիճանի որոշումը փաստացի իրականացվել է դիսպետչերի կողմից՝ ահազանգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա, իսկ ՃԿԱԿ-ի կողմից կիրառվող թվային քարտեզները և գեոլոկացիոն համակարգերը եղել են ոչ լիարժեք և ունեցել են սահմանափակ հնարավորություններ:
- Կանչի արձագանքման արդյունավետության գնահատման համար սահմանված արդյունքային չափորոշիչները (նորմատիվները) վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք ակնհայտ բարձր են փաստացի ցուցանիշներից:
- Կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման որևէ չափորոշիչ չի սահմանվել, համակարգի գործունեության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել:
- Բավականին ցածր է նաև Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հենակետերի գործունեության արդյունավետությունը (ամսական աշխատավարձի ֆոնդը կազմել է 64,335.9 հազ. դրամ): Թվով 16 հենակետերից 6-ն ընդհանրապես չի ունեցել տրանսպորտային միջոց, իսկ 3-

ի դեպքում առկա տրանսպորտային միջոցը ընդհանուր օգտագործման օժանդակ ավտոմեքենա է եղել և նախատեսված չի եղել հրշեջ-փրկարարական աշխատանքներ կատարելու համար: 2020թ. բոլոր հենակետերը միասին իրականացրել են թվով 84 ելք:

- ՓԾ հաստիքացուցակում ներառված և վերջինիս բյուջետային միջոցներից վարձատրվող թվով 146 փրկարար ծառայողներ, առանց որևէ իրավական հիմնավորման, ՀՀ տարածքում գործող թվով 11 հատուկ նշանակություն ունեցող օբյեկտներում իրականացրել են փրկարար ծառայողին չվերապահված գործառույթներ, այն դեպքում, երբ այդ գործառույթները վերոնշյալ օբյեկտների ամենօրյա ուղղակի պարտականությունն է եղել:
- ՀՀ-ում տարբեր միջոցառումներին (համերգներ, սպորտային/ մարզական խաղեր, կորպորատիվ ծրագրեր և այլն) մարտական հաշվարկի հերթապահության որևէ չափորոշիչ և վճար չի սահմանվել:

Փրկարար ծառայության ծախսային արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է ելքի ինքնարժեքի (ծախսեր/ելքի քանակ) հաշվարկ: 2020թ. մարտական հաշվարկի ելքի ամենամեծ ինքնարժեքը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 1,521.1 հազ դրամ, իսկ ամենացածրը՝ Երևան քաղաքում՝ 176.1 հազ. դրամ: 2018-2020թթ. ՓԾ միավոր ելքի միջին ինքնարժեքը կազել է 331,362 դրամ:

Նշված ինքնարժեքի հաշվարկը հնարավորություն է տալիս գնահատել հաշվեքննության շրջանակում արձանագրված անարդյունավետ ծախսերի ֆինանսական չափը: Ազդանշող սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերի հետևանքով 2018-2020թթ. ՓԾ կատարել է 436,711,808.13 հազ դրամի ծախս, իսկ տեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների համար կատարված ելքերի հետևանքով՝ 1,651,846.6 հազ. դրամի ծախս:

Ծախսային արդյունավետության գնահատման նպատակով հաշվարկվել է նաև ՃԿԱԿ-ի կողմից զանգերի ընդունման և կանչերի արձանագրման ինքնարժեքը: Մասնավորապես՝ մեկ զանգի սպասարկման ինքնարժեքը Երևան քաղաքում կազմել է 376 դրամ, մարզերում 488 դրամ, իսկ մեկ կանչի արձանագրման ինքնարժեքը համապատասխանաբար 25.1 հազ. դրամ և 44.1 հազ. դրամ:

Հիմնվելով հաշվեքննության արդյունքների վրա՝ Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ Փրկարար ծառայության կազմակերպման գործընթացում 2018-2020թթ. արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ: Փրկարար ծառայության պլանավորման, աշխատանքների կազմակերպման և ծառայության կատարման գործընթացները իրականացվել են բազմաթիվ թերություններով: Փրարար ծառայությունը պատշաճ մակարդակով չի իրականացրել ՓԾ հաստիքային և նյութական ապահովումը, իսկ կանչերի սպասարկման գործընթացում առկա են եղել ոչ արդյունավետ ծախսային բաղադրիչներ և տարրեր:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ ՓԾ կազմակերպման գործընթացի համար 2018–2020թթ. հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման

կառավարումը արդյունավետ չի եղել, և օրենսդրորեն սահմանված նպատակային արդյունքների ամբողջական իրականացմանը չի հանգեցրել:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ՀՀ կառավարությանը**

1. Ձեռնարկել համապատասխան քայլեր Քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի ամբողջական վերամշակման, թարմացման և հաստատման ուղղությամբ:
2. Վերամշակել և հաստատել ՀՀ քաղաքացիական պաշտպանության նոր հայեցակարգը:
3. Մշակել քաղաքացիական պաշտպանության պլանների և ՔՊ ստորաբաժանումների ստեղծման չափորոշիչներ, սահմանել դրանց կազմման և ներկայացման նկատմամբ հսկողական մեխանիզմներ:
4. Ավարտին հասցնել «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրամշակման աշխատանքները և օրենքի նախագիծը ներկայացնել Ազգային ժողով:
5. Ստանդարտացման պետական ամենամյա ծրագրում ներառել արտակարգ դեպքերի ըստ բնույթի և տեսակների դասակարգման վերաբերյալ ազգային ստանդարտների մշակման աշխատանքները:
6. Քայլեր ձեռնարկել Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեխնիկական վերազինման և ՓԾ թվային հագեցվածության բարձրացման ուղղությամբ:
7. Քայլեր ձեռնարկել ՓԾ տրանսպորտային միջոցների պարկը թարմացնելու և տեխնիկական վերազինման ուղղությամբ:
8. ՓԾ ծառայողների հանդերձանքի և անհատական պաշտպանության միջոցների համար նախատեսված ֆինանսավորումը կատարել հաշվի առնելով առկա պահանջները և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչները:

### **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը**

1. Մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ՓԾ զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն:
2. Քայլեր ձեռնարկել Երևան քաղաքի Մալաթիա Սերաստիա և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններում ՀՓՋ հենակետեր ստեղծելու ուղղությամբ, այդ նպատակով մշակել ՀՓՋ հենակետ-կայանների նոր չափորոշիչներ, որոնք կիրառելի կլինեն ստեղծված պայմաններում:
3. Մշակել մասսայական միջոցառումներին ՓԾ մարտական հաշվարկի հերթապահության չափորոշիչները, այդ միջոցառումներին մասնակցության դիմումների քննության և բավարարման կարգ, ինչպես նաև ապահովել մարտական հաշվարկների կողմից իրականացվող հերթապահությունների հաշվառումը:

4. Մշակել ՓԾ առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգը, բացառել Ծառայության առանձնահատուկ պայմաններին ուղղակիորեն չառնչվող աշխատակիցներին հավելավճարների տրամադրումը:
5. ՓԾ կենտրոնական ապարատի օպտիմալացման, առանձին օբյեկտներում ծառայություն իրականացնող անձնակազմի և Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի թերժանրաբեռնված ստորաբաժանումների ծառայողների վերաբաշխման միջոցով ապահովել ՀՓՋ-ներում մարտական հաշվարկների անձնակազմի համալրում:
6. ՓԾ հաշվեկշռում գտնվող, սակայն չշահագործվող տրանսպորտային միջոցները հանել ծառայության հաշվեկշռից և բացառել դրանց ներառումը վառելիքի, տրանսպորտային միջոցների նորոգման և պահպանման և տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերի պլանավորման մեջ:
7. Քայլեր ձեռնարկել փրկարար ծառայողներին անհատական պաշտպանական միջոցների բավարար քանակով ապահովելու համար:
8. Քայլեր ձեռնարկել ՓԾ թվային տեխնոլոգիաներով հագեցվածության և ՃԿԱԿ-ի տեխնիկական վերազինման բարձրացման ուղղությամբ, ներդնել կանչի տեղորոշման, գրանցման և կանչի փոխանցման ավտոմատացված համակարգեր:
9. Մշակել և ներդնել արտակարգ դեպքերի աճի մոնիթորինգի և վաղաժամ ազդանշան գործուն համակարգ:
10. Հրդեհների ազդանշան համակարգերի միջոցով կանչերի արձանագրման ծառայություն մատուցող կազմակերպությունների համար սահմանել նվազագույն չափորոշիչներ և սերտիֆիկացման պահանջներ, քայլեր ձեռնարկել արձանագրված կեղծ կանչերի նվազեցման ուղղությամբ:
11. Մշակել և հաստատել բազմագործոն նորմատիվներ «Ահազանգ-մեկնում-կանչի վայր-գործողությունների ավարտ» ժամանակահատվածների համար:
12. Ձեռնարկել միջոցառումներ «Ահազանգ-մեկնում-կանչի վայր-գործողությունների ավարտ» ժամանակահատվածների նվազեցման և միջազգային չափորոշիչների համապատասխանեցման ուղղությամբ:
13. Մշակել կանչերի արձագանքման արդյունավետության գնահատման համակարգ և սահմանել հսկողական մեխանիզմներ:
14. ՀՓՋ-ների ծանրաբեռնվածության և կանչերի արձանագրման ժամային ծանրաբեռնվածությունների ուսումնասիրության հիման վրա վերանայել ՀՓՋ-ների և Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի 24 ժամյա հերթապահության ռեժիմը, մշակել և ներդնել հերթապահությունների առավել արդյունավետ համակարգ:

**«Հաշվերնիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվերնության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվերնիչ պալատին տրամադրում է ընթացիկ**

**Եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:**

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք
2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք
3. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք
4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք
5. ՀՀ կառավարության 13.06.2013թ. թիվ 622-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 03.07.2020թ. թիվ 737-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 26.09.2019թ. թիվ 1278-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 02.02.2006թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևի տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 249-Ն որոշում
10. ՀՀ նախագահի 2011թ. դեկտեմբերի 27-ի «ՀՀ Քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-229-Ն հրամանագիր
11. 2018թ. հունիսի 11-ի ՀՀ վարչապետի «ՀՀ ԱԻՆ կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 740-Լ որոշում
12. 2020թ. հունվարի 13-ի ՀՀ ԱԻ նախարարի «Փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 23-Լ հրաման
13. ՀՀ ԱԻ նախարարի 2016թ. ապրիլի 12 -ի թիվ 353-Ն հրաման
14. ՀՀ ԱԻ նախարարի 17.03.2014թ. թիվ 209-Ա հրաման
15. ԱԻ նախարարի 2018թ. նոյեմբերի 12-ի «Փրկարար ծառայության հատուկ հրշեջ եվ հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրերին և տարածքում տեղակայվող շենքերին ու շինություններին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» թիվ 1256 հրաման
16. ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. ապրիլի 14-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնում ծառայության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 476-Լ հրաման
17. ՀՀ ԱԻ նախարարի 2018թ. ապրիլի 17-ի թիվ 387 հրաման
18. ՀՀ ԱԻ նախարարի 2020թ. նոյեմբերի 26-ի «Հրդեհաշիջման աշխատանքների առանձնահատկությունները, հրդեհաշիջման և աշխատանքների իրականացման եվ հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1513-Ն հրաման
19. ՀՀ ԱԻ նախարարի 2019թ. դեկտեմբերի 3-ի «Հրշեջ-շարային պատրաստության նորմատիվային ցուցանիշներ հաստատելու մասին» թիվ 1309 հրաման
20. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ 17/955-Լ հրաման
21. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. հունվարի 17-ի թիվ 17/33-Լ հրաման

22. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրաման
23. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2020թ. հոկտեմբերի 12-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության ստորաբաժանումների ուժերն ու միջոցները հրդեհաշիջման և վթարափրկարարական աշխատանքներին ներգրավման կարգը սահմանելու մասին» թիվ 17/1143 հրաման
24. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 05.09.2017թ. «ՀՀ գործող «բարձր կանչի» օբյեկտների ցանկը՝ ըստ բարդության աստիճանների հաստատելու մասին» թիվ 17/1206 հրաման
25. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում- ՀՀՇՆ 30-01-2014 նորմ» թիվ 263-Ն հրաման
26. ՀՀ ԱԻՆ ՓԾ «Հրդեհապայթյունավտանգ, քիմիապես վտանգավոր օբյեկտների հաշվառման» ցանկ
27. ՆԳՆ հրշեջ-շարային պատրաստականության 2000 թվականի հրահանգ
28. 2018-2020թթ. Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներ
29. 2018-2022թթ. Պետական բյուջեի Միջնաժամկետ ծախսային ծրագրեր